- 23) Հանրային լուսմների առաջին շրջանը կազմակերպվեց 2010 և 2012 թվականներին (ՇՆՏԱ փուլում): ՀՕՏՕ 3-ի հետագա հանրային լուսմները տեղի ունեցան 2013 թվականի օգոստոսին՝ երկու փուլով: Հանրային լուսմների ընթացքում ներկայացվեց իրավունքների սխեման, բողոքների լուծման մեխանիզմը, գնահատման մեթոդաբանությունը, չափագրման հետազոտությունը, ծրագրի քարտեզը՝ իրական չափագրումով և ԱԵԱ-ների անուններով, ինչպես նաև ԱԵԱ-ների հետ առանձին դեպքերի քննարկումներ: Ընդհանուր առմամբ, հանրային լուսմներին մասնակցեցին 112 ԱԵԱ-ներ:
- 24) Իրականացման համար պատրաստ սույն ՀՕՏՕ-ն հաստատվելուց հետո կտեղադրվի ԱԶԲ և ԵՔ պաշտոնական կայքէջերում: Ծրագրի տեղեկատվական բրոշյուրը կտրամադրվի ԱԵԱ-ներին ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի կողմից ՀՕՏՕ-ի հաստատումից հետո:

7. Բյուջեի ամփոփում

- 25) ՀՕՏՕ 3-ի ամբողջական իրականացումը, ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման նպաստը, ինչպես նաև ՀՕՏՕ 3-ի իրականացման վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը կազմում են **2,857,109,250.34** ՀՀ դրամ, որը համարժեք է **7,003,831.27** ԱՄՆ դոլարին: Բյուջեի միջոցները կտրամադրվեն 3 աղբյուրներից՝ 1) հողի փոխհատուցման և հողի օտարման այլ ծախսեր, ներառյալ՝ հարկերը, տուրքերը, վճարները և գործառնական ծախսերը՝ Երևանում գտնվող հողերի համար, կվճարվեն ԵՔ-ի բյուջեից; 2) բոլոր հարկերը, վճարները, հողից բացի այլ կորուստների հետ առնչվող գործառնական ծախսերը, ներառյալ՝ նպաստների հետ առնչվող գործառնական ծախսերը, կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման մասից; 3) մնացած ակտիվների դիմաց փոխհատուցումը, ներառյալ՝ նպաստները, կհատկացվեն վարկից: ՀՀ կառավարության կողմից Հողի օտարման և տարաբնակեցման սույն ծրագրի հաստատումից հետո Երևանի քաղաքապետարանը և ՀՀ ֆինանսների նախարարությունը համապատասխանաբար կապահովեն ՀՕՏՕ 2-ի բյուջեով նախատեսված ֆոնդերի ժամանակին հատկացումները Երևան համայնքի և ՀՀ պետական բյուջեի շրջանակներում տվյալ ծրագրով նախատեսված միջոցներից՝ անհարժեշտության դեպքում սահմանված կարգով կատարելով ներքին հողվածային վերաբաշխում:

8. Բողոքների լուծման մեխանիզմ

- 26) Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի քանի կողմեր՝ 1) ԾԻԳ, 2) ԵՔ և 3) ԾԿԻՆ: ԱԵԱ-ների համար գործընթացը մատչելի դարձնելու նպատակով ԾԻԳ-ը հիմնեց դաշտային գրասենյակ՝ ՀՕՏՕ 3-ի մշակման ընթացքում ԱԵԱ-ների հետ շարժական հանդիպումներ կազմակերպելու համար: Վերջինս կգործի ՀՕՏՕ իրականացման փուլում: Անկախ հիմնված բողոքի լուծման մեխանիզմից և ընթացակարգից՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն իրենց հայցը ներկայացնել դատարան՝ բողոքարկման գործընթացի ցանկացած պահին:

9. Մոնիտորինգ և գնահատում

- 27) ՀՕՏՕ 2-ի իրականացումը կենթարկվի թե՛ ներքին, թե՛ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից՝ ԾԿԻԱԽ-ի աջակցությամբ: Արտաքին մոնիտորինգը հանձնարարված է «Էյեմ Փարթնրս» («Am Partners») անկախ մոնիտորինգային գործակալությանը (ԱՄԳ)՝ վարձված ԵՔ-ի և հաստատված ԱԶԲ-ի կողմից: ԱՄԳ-ն մոնիտորինգի կենթարկի ՀՕՏՕ-ի իրականացումը և կպատրաստի Համապատասխանության հաշվետվություններ, որոնք պետք է հաստատվեն ԱԶԲ-ի կողմից՝ որպես կապակի շինարարական աշխատանքները սկսելու պայման:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկություններ

28) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով՝ իրականացվելով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Էկոնոմիկային նախարարության (ԷՆ) կողմից, որը հանդես է գալիս որպես Գործադիր մարմին (ԳՄ), և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից, որը հանդես է գալիս որպես Իրականացնող մարմին (ԻՄ) և գործում է անմիջապես ԾԻԳ-ի միջոցով: Ծրագրի հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օդակի բացակայող ճանապարհային հանգույցները Երևան քաղաքում:

29) Առայժմ Ծրագիրը ենթադրում է երկու տրանշեր.

ա. Տրանշ 1-ը, որը ներառում է Շիրակի փողոց և Արտաշատի խճուղի հատվածի բարելավումը և Արշակունյաց պողոտայի լայնացումը, բաժանված է երկու մրցութային ենթահատվածների (մրցույթ 1 և 2)

բ. Տրանշ 2-ը, որը ներառում է Արգավանդի մայրուղի - Շիրակի փողոցի արևմտյան հատվածի բարելավումը:

30) Սույն Հոդվածի օտարման և տարաբնակեցման ծրագիր 3-ը (ՀՕՏՕ 3) մշակվել է Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Տրանշ 1-ի շրջանակում մրցույթ 2-ի տարածքում իրականացվելիք շինարարական աշխատանքների ազդեցությունը գնահատելու և փոխհատուցումը սահմանելու նպատակով:

31) Մրցույթ 2-ի իրականացումը պահանջում է հողի զգալի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ)՝ ավելի քան 200 զգալի ազդեցության ենթարկված անձանցով (ԱԵԱ), որոնք կորցնում են իրենց եկամուտ ստեղծող գույքի ավելի քան 10%-ը կամ ֆիզիկապես տեղահանվում են իրենց տներից: Սա դասակարգվել է որպես Ա կատեգորիայի ծրագիր՝ համաձայն ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՄ, մաս Ֆ1/ԳՄ, պարբերություն 8):

1.2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակն ու շրջանակը

32) ՀՕՏՕ 3-ի հիմնական նպատակն է բացահայտել Մրցույթ 2-ի արդյունքում ազդեցությունները և ազդեցության ենթակա անձանց, սահմանել նրանց փոխհատուցումը և աջակցել նրանց՝ վերականգնելու իրենց կենսամակարդակը: ՀՕՏՕ 3-ը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և կանոնակարգերին, N273-Ն առ 7.03.2012 թ. «Ծրագրի ՀՕՏ շրջանակը (ՀՕՏՕ)» ՀՀ կառավարության որոշմանը և ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրին (ԱԶՀ) 2009 թ.:

33) Սույն ՀՕՏՕ 3-ը ներառում է՝ 1) ԱԵԱ-ների պրոֆիլը, 2) ազդեցության ենթակա ամբողջ գույքի մանրամասն չափազրման հետազոտությունը (ՄՉՀ), 3) տեղեկատվության հրապարակումը և ԱԵԱ-ների հետ հանրային լուսմների կազմակերպումը, 4) վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը, 5) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը, 6) վերաբնակեցումը և եկամտի վերականգնումը, 7)

տարաբնակեցման բյուջեն, 8) ինստիտուցիոնալ շրջանակը, 9) ՀՕՏՄ իրականացման ժամանակացույցը և 10) ՀՕՏՄ իրականացման մոնիտորինգը:

34) ՀՕՏՄ 3-ը հիմնված է Ծրագրի վերջնական մանրամասն նախագծի վրա և պատրաստ է իրականացման համար: Սույն ՀՕՏՄ-ն ավարտելու համար նախաձեռնվել են հետևյալ քայլերը.

ա. ԱԵՏՏ-ների, ԱԵԱ-ների մարդահամարի և կորուստների գույքագրման իրականացում,

բ. Ազդեցության ենթակա հողերի, շենքերի, կառույցների և այլ գույքի մանրամասն չափագրման, նկարագրության և գնահատման իրականացում,

գ. ՀՕՏՄ 3-ի ԱԵՏՏ-ների 99% ընտրանքով սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացում,


դ. ԱԵԱ-ների հետ հանրային լուսմների իրականացում,

ե. Բոլոր տեսակի կորուստների համար փոխհատուցման մանրամասն բյուջեի պատրաստում:

1.3 Ծրագրի տեղակայվածությունը

35) Երևանը ՀՀ-ի մայրաքաղաքն է և զբաղեցնում է 260 կմ² տարածք՝ տարածվելով 18 կմ դեպի հյուսիս-հարավ ուղղությամբ և 16 կմ՝ արևելք-արևմուտք ուղղությամբ: Ծրագրային տարածքը տեղակայված է Երևանի հարավ-արևմուտքում՝ Շենգավիթ և Մալաթիա վարչական շրջաններում, Երևան քաղաքի կենտրոնից մոտավորապես 6 կմ հեռավորության վրա և Արարատի մարզի Արգավանդ և Գետափնյա համայնքներում:

Նկար 1-1 Ծրագրի տեղակայվածությունը



1.4 ՀՕՏՑ 3 -ի բովանդակությունը

36) Այս նպատակներն իրագործելու համար ՀՕՏՑ 3-ը ներկայացնում է մանրամասներ, որոնք անհրաժեշտ են փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման համար՝ սահմանելով՝

ա. ԱԵԱ-ների պրոֆիլը,

բ. կորուստների չափը և Տրանշ 1-ի նոր ծրագծի հատվածի ազդեցությունը,

գ. տեղեկատվության հրապարակում, հանրային լուսմները և մասնակցությունը,

դ. վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը,

ե. բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը,

զ. տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած ակտիվների, վերաբնակեցման և վերականգնման գնահատումն ու փոխհատուցման չափը,

է. տարաբնակեցման ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ շրջանակը և ՀՕՏՑ-ի իրականացման մոնիտորինգը:

1.5 Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները

37) ԱԶԲ անվտանգության պահանջների և ԲՖԳ Ծրագրի համաձայն՝ յուրաքանչյուր տրանշի հաստատումը/իրականացումը հիմնված է հետևյալ պայմանների վրա.

ա. ԲՖԳ/Առաջին տրանշի գնահատում. պայմանավորված է հետևյալ գործողություններով՝ ա) ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ ամբողջ ԲՖԳ-ի համար ՀՕՏՑ-ի պատրաստում/ներկայացում, բ) Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում (ԱՍՀՆԳ) և գ) ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ՀՕՏՑ-ների պատրաստում/ներկայացում Ծրագրի յուրաքանչյուր տրանշի համար, որը պահանջում է ՀՕՏ:

բ. Պարբերական ֆինանսավորման հայտի (ՊՖՀ) հաստատում հետագա տրանշների և յուրաքանչյուր ենթածրագրի համար. Պայմանավորված է հետևյալ գործողություններով՝ ա) ՀՕՏՑ-ի վերանայում/փոփոխում/ներկայացում, բ) Աղքատության նվազեցման և սոցիալական ռազմավարության ամփոփագրի պատրաստում (ԱՆՍՌԱ), գ) յուրաքանչյուր տրանշի համար, որն ունի ՀՕՏ, պատրաստել/ներկայացնել առնվազն ՀՕՏՑ նախագծային տարբերակներ՝ փոփոխված ՀՕՏՑ-ին համահունչ, ինչպես նաև ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ:

գ. Պայմանագրի ստորագրումը. պայմանավորված է հետևյալ գործողություններով՝ ա) ՀՀ կառավարության և ԱԶԲ կողմից ՀՕՏՑ ենթածրագրի հաստատում (այս դեպքում ՀՕՏՑ 3-ի), իրականացման համար պատրաստ փաստաթղթի և տեղեկատվական բրոշյուրի ներկայացում հանրությանը, գ) Անկախ մոնիտորինգի գործակալության վարձում:

դ. Շինարարական աշխատանքների մեկնարկը. պայմանավորված է ՀՕՏՎ վերջնական ենթածրագրի ամբողջական իրականացմամբ (այս դեպքում ՀՕՏՎ 3-ի), որն արձանագրված կլինի ԱԶԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

1.6 Փաստաթղթի հրապարակումը

- 38) Վերջնական թարմացված, իրականացման համար պատրաստ սույն ՀՕՏՎ-ն հայերեն լեզվով կտեղադրվի ԵԲ-ի պաշտոնական կայքէջում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո: Անգլերեն լեզվով ՀՕՏՎ-ն կտեղադրվի ԱԶԲ-ի պաշտոնական կայքէջում՝ ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց անմիջապես հետո: ՀՕՏՎ-ի ամփոփ տեղեկատվական բրոշյուրը հայերեն լեզվով կտրամադրվի ԱԵԱ-ներին ՀՕՏՎ-ի հասատումից հետո:

1.7 ՀՕՏՎ 3-ի կասեցման օրը

- 39) ՀՕՏՎ 3-ի համար կասեցման օրը 2012 թվականի ապրիլի 13-ն է, երբ ՀՕՏՎ նախագծի համար սկսվել է հողի, շինությունների և ձեռնարկատիրական գործունեությունների նկարագրության արձանագրությունների ստորագրումը: Արձանագրությունների ձևաչափը ներկայացված է Հավելվածներ 13, 14, 15-ում:

2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

2.1 Ընդհանուր տեղեկություններ

40) Սույն ՀՕՏՕ-ի մշակման համար ընդունված հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ Ծրագրի առնչությամբ փոխհատուցման բոլոր վճարումները և կենսապահովման միջոցների վերականգնմանն ուղղված աջակցությունը պետք է հիմնված լինեն ԱԵԱ-ների վրա Ծրագրի ազդեցությունների մանրամասն վերլուծության վրա: Սույն ՀՕՏՕ 3-ի համար տվյալները թարմացվել են 2013 թվականի մարտից 2013 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում: Ծրագրի ՀՕՏ ազդեցությունների չափը ճշգրտորեն գնահատելու համար՝ իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

ա. Մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՉՀ)՝ ազդեցության ենթակա հողակտորների, շենքերի/շինությունների տարածքի և գույքի այլ տեսակների և քանակի ճշգրիտ նկարագրությունն ու չափագրումը:

բ. Կորուստների գույքագրում՝ օտարման ենթակա հողի, շենքերի/շինությունների և գույքի հատկանիշների բացահայտում և գնահատում:

գ. Ազդեցության ենթակա գույքի փոխարինման արժեքի գնահատում՝ ՀՕՏՕ բյուջեն մշակելու համար կորցրած գույքի արժեքի, եկամտի և կենսապահովման այլ աղբյուրների և օժանդակությունների/նպաստների բացահայտում:

դ. Մարդահամար՝ ԱԵՏՏ-ների և դրանց անդամների ճշգրիտ քանակի բացահայտում, ներառյալ՝ որոշ տարրական առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ սեռը և էթնիկ պատկանելիությունը:

ե. Սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՍՏՀ)՝ ազդեցության ենթակա անձանց, ընտանիքների և ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերերի ներկա սոցիալ-տնտեսական կարգավիճակի, ինչպես նաև հանրային ծառայությունների մատչելիության, փոխհատուցման վերաբերյալ պատկերացումների և նրանց կենսամակարդակի վրա Ծրագրի ազդեցության բացահայտում:

2.2 Հետազոտության մեթոդաբանությունը

41) ՄՆՇՎԽ-ն, ծրագրի շրջանակներում որպես խորհրդատու վարձեց հավատարմագրված չափագրող և գնահատող կազմակերպություն՝ նախորդ բոլոր հետազոտությունների արդյունքներից անկախ՝ օտարման ենթակա յուրաքանչյուր գույք չափելու և վերագնահատելու համար: Սա իրականացվեց անկախ այն տվյալներից, որոնք կարելի էր ձեռք բերել կադաստրային քարտեզներից, ՀՕՏՕ-ների նախագծերի մշակման ընթացքում ձեռք բերված տվյալներից, ինչպես նաև Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա գույքի իրավական կարգավիճակից:

42) ՄՉՀ շրջանակը և ակտիվների գույքագրումը ներառում էին ներքոնշյալ գույքի կամ հատկանիշների բացահայտումը, դասակարգումը, չափագրումը և գնահատումը.

ա. Հող (գյուղատնտեսական, բնակելի, արդյունաբերական և առևտրային նշանակության հողակտորներ), ներառյալ՝ այդ հողակտորների վրա բարելավումները

բ. Շենքեր/շինություններ (բնակելի և ձեռնարկատիրական գործունեությունների շինություններ, ներառյալ՝ դասակարգումն ըստ շենքի կատեգորիայի և շինության տեսակի)

գ. ԱԵԱ-ի կողմից հողի զբաղեցման իրավական կարգավիճակը

դ. Մշակաբույսերի տեսակն ու զբաղեցրած տարածքը

ե. Ծառերի տեսակն ու քանակը

զ. Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները (ազդեցության տեսակը և իրավական կարգավիճակը)

է. Զբաղվածության կորուստ

ը. Ազդեցության ենթակա համայնքների/հանրային գույքի քանակը, տեսակը և տարածքը:

43) ՄՉՀ-ն ներառում էր գոյություն ունեցող անշարժ գույքի՝ հողերի և նրանց վրա կառուցված շենքերի/շինությունների չափագրումը, դրանց նպատակային նշանակության, սեփականության, օգտագործման ձևի, դրանց որակի և քանակի, տեսքի և տեսակի որոշումը: Չափագրումներն իրականացվեցին՝ ԱԶԲ համապատասխան քաղաքականության փաստաթղթի պահանջների և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությանն առընթեր (ԿԱ) անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 283-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի՝ անշարժ գույքի չափագրման (գրանցման) վերաբերյալ հրահանգի համաձայն: Չափագրումները կատարվեցին արբանյակային տեղորոշման կայանների, տախտեմետրի և լազերային որոնիչների միջոցով: ԱԶԲ քաղաքականության պահանջների համաձայն՝ ներկայիս փաստացի չափագրումը հիմնված է չափագրման պահին ԱԵԱ-ի կողմից օգտագործվող գույքի իրական չափի վրա: ԱԵԱ-ներին դաշտային այցելության նախորդ օրը հետախոսով տեղեկացվել է չափագրման օրն ու ժամը: Այս ընթացակարգն ապահովում էր ԱԵԱ-ի կողմից չափագրման գործընթացի մոնիտորինգը (մանրամասները ներկայացված են Հավելված 2-ում): Եթե իրական չափագրումը համապատասխանում է ԱԳԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայագրում նշված պարամետրերին (հաշվի առնելով ԱԳԿՊԿ-ի կողմից սահմանված շեղումների թույլատրելի սահմանները), ապա սեփականության հատակագիծը ԱԳԿՊԿ հանձնելու համար պատրաստվում է ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում: Իսկ եթե այդպես չէ, սեփականատիրոջը տեղեկացվում է այդ մասին: Եթե սեփականատերը ցանկանում է, պատրաստվում է նոր հատակագիծ՝ ԱԳԿՊԿ հանձնելու համար: Սեփականության վկայականում համապատասխան ուղղումներ կատարելուց հետո պատրաստվում է վերջնական հատակագիծ ԱԳԿՊԿ հանձնելու համար և նախքան գույքի օտարման պայմանագրի ստորագրումը անշարժ գույքի վերագրանցման համար:

2.3 Ազդեցությունը հողի վրա

2.3.1 Հողի դասակարգումը՝ ըստ ՀՀ հողային օրենսգրքի

44) ՀՀ հողային օրենսգրքը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների), դասակարգում է՝ 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7)

անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի: Յուրաքանչյուր նպատակային նշանակության հող, ըստ օգտագործման բնույթի, դասակարգվում է հողատեսքերի կամ գործառնական նշանակության հողերի:

45) Ծրագիրը տեղակայված է հիմնականում քաղաքային վայրում: Ազդեցության ենթակա գրեթե բոլոր հողերը ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից դասակարգված են որպես բնակավայրերի հողեր: Պարզությունն ապահովելու համար և հիմնվելով իրական օգտագործման վրա՝ ազդեցության ենթակա հողի կատեգորիաները խմբավորվել են հետևյալ կերպ՝ այգիներ/գյուղատնտեսական նշանակության, բնակելի, ոչ բնակելի, առևտրային և արդյունաբերական հողեր:

ա. Այգիներ/գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնք օգտագործվում են մշակաբույսեր, բանջարեղեն, մրգեր, փայտանյութ/դեկորատիվ ծառեր և թփեր աճեցնելու նպատակով,

բ. Բնակելի հողեր, որոնք օգտագործվում են բնակելի տների, հարակից օժանդակ կառույցների և այգեգործության նպատակով,

գ. Ոչ բնակելի հողեր, որոնք օգտագործվում են ոչ բնակելի նպատակներով, ինչպես օրինակ՝ ավտոտնակ կամ պահեստ,

դ. Առևտրային հողեր, որոնք օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով, ինչպես օրինակ՝ խանութներ և բենզալցակայաններ,

ե. Արդյունաբերական հողեր, որոնք օգտագործվում են գործարանների, գործարանային գրասենյակների և արդյունաբերական պահեստների և ապրանքապահեստների նպատակով:

2.3.2 Հողի կորուստ

46) Ազդեցության ենթակա հողերը կենտրոնացված են Երևանի Շենգավիթ վարչական շրջանում: Ընդհանուր առմամբ, ազդեցության կենթարկվեն 85 հողակտորներ՝ ընդգրկելով **26,580.38** մ² ընդհանուր մակերեսով տարածք: Ընդհանուր առմամբ, 70 տնային տնտեսություններ հողի վրա կկրեն ազդեցություն: Կան 2 հողակտորներ՝ յուրաքանչյուրը 2 համասեփականատերերով, և մեկ հողակտոր՝ 3 համասեփականատերերով: Ազդեցության ենթակա հողակտորները հիմնականում բնակելի, այգիներ կամ առևտրային հողակտորներ են:

47) Ազդեցության ենթակա հողակտորները, ըստ իրենց իրավական կարգավիճակի, խմբավորված են հետևյալ կերպ՝

ա. Սեփականության իրավունքով տնօրինվող հող՝ ընդհանուր առմամբ, ազդեցության ենթակա երեսուն հողակտորների նկատմամբ ԱԵԱ-ներն ունեն օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք: Մասնավոր հողակտորների մեծամասնությունը բնակելի են (26): Երկու հողակտորներ առևտրային են, սակայն ներկայումս չեն օգտագործվում ըստ իրենց նպատակային նշանակության: Երկու հողակտորներ ունեն արդյունաբերական նշանակություն. մեկում արդյունաբերական արտադրությունը փակվում է, իսկ մյուս հողակտորի վրա տեղակայված է “Նաիրիս” գործարանը: Ոչ մի ձեռնարկատիրական գործունեություն ազդեցության չի ենթարկվի, քանի որ ազդեցության կենթարկվի հողի և/կամ ցանկապատի մի մասը:

բ. Օրինականացման ենթակա հող - 11 հողակտորներ օրինականացման գործընթացում են և օգտագործողները կփոխհատուցվեն որպես սեփականատեր օրինականացման գործընթացի ավարտից անմիջապես հետո (խնդրի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Գլուխ 6-ում): Բոլոր հողակտորները բնակելի են:

գ. Համայնքային հող՝ հող, որը պատկանում է Երևանի քաղաքապետարանին: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ այդպիսի 44 հողակտորներ անմիջականորեն օգտագործվում են ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով, վարձակալների կողմից՝ առանց սեփականության իրավունքի, իսկ մեկ հողակտոր վարձակալված է օրենքով սահմանված կարգով: Վարձակալված հողակտորն օգտագործվում է ձեռնարկատիրական գործունեության համար (մետաղական արհեստանոց), որը ենթակա է տեղափոխման: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող 44 հողակտորներից մեկը գտնվում է հանրային վայրում՝ բազմահարկ բնակելի շենքի դիմաց, որտեղ ԱԵԱ-ն սկսել էր կառուցել շինություն՝ մասնավոր հիմունքներով օգտագործման նպատակով: Մեկը բետոնապատ փոքր հողակտոր է ոչ բնակելի/չօգտագործվող կառույցի հարևանությամբ: Երրորդը հողակտոր է՝ ավտոտնակով: Պարզություն ապահովելու նպատակով՝ այս երեք հողակտորները դասակարգվել են որպես ոչ բնակելի (հանրային տարածքներ):

Մյուս 17 հողակտորներն օգտագործվում են որպես այգիներ (մրգատու և դեկորատիվ ծառերով), որոնցից 5 հողակտորներ ենթակա են մասնակի ազդեցության և ազդեցության ենթակա մասը կազմում է 10-ից 50 քառ. մ: Մյուսներն ընդհանուր առմամբ ազդեցության են ենթարկվում նվազագույնը՝ 173 քառ. մ և առավելագույնը՝ 898 քառ. մ (միջինը՝ 372 քառ. մ 12 հողակտորների համար) տարածքով: Ութ հողակտորներ օգտագործվում են առևտրային նպատակներով, որոնցից 6-ի վրա ձեռնարկատիրական գործունեությունները կենթարկվեն մշտական ազդեցության (մանրամասները ներկայացված են ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցության մասում), և մյուս երկուսը զգալի ազդեցության չեն ենթարկվի (ազդեցության կենթարկվի միայն ցանկապատը): 43 հողակտորներից 14-ն օգտագործվում են բնակելի նպատակներով: ԱԵՏՏ-ները լրացուցիչ օգտագործում են համայնքային հողերը՝ ի լրումն իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքի հարևանությամբ գտնվող բնակելի հողերի (այս հատվածում չկա որևէ այլ վերաբնակեցվող ԱԵԱ, որը կկորցնի միայն օրենսդրության պահանջների խախտմամբ օգտագործվող բնակելի հող: Բոլոր ԱԵԱ-ներն ունեն նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի հողեր):

- 48) Համայնքային հողի սեփականատերը (Երևանի քաղաքապետարանը) չի փոխհատուցվի: Ավելին, ԵՔ-ն կփոխհատուցի Երևան քաղաքում հողերի բոլոր կորուստները ԵՔ բյուջեից, քանի որ կառուցվող ճանապարհը կդառնա ԵՔ-ի սեփականությունը: Հողերի սեփականատերերը և վարձակալը կփոխհատուցվեն հողի կորստի համար ԵՔ բյուջեից: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործողներին կվճարվի վերականգնման նպաստ ԵՔ բյուջեից (մանրամասների համար տես՝ Գլուխներ 7 և 8):
- 49) Ազդեցության ենթակա բոլոր կատեգորիաների հողակտորները կփոխհատուցվեն: Հողի վրա ազդեցության վերաբերյալ տվյալները ամփոփված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 2-1 Հողի կրած ազդեցությունը՝ ըստ հողի տեսակի և սեփականության/հողի զբաղեցման կարգավիճակի

Հողի կատեգորիան	Համայնքային				Սեփականության իրավունքով		Օրինականացման գործընթացում գտնվող գույքը		Ընդամենը	
	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող		Վարձակալված							
	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը
	No	մ ²	No	մ ²	No	մ ²	No	մ ²	No	մ ²
Բնակելի	14	1,274.01	-	-	26	10626.8	11	4,577.72	51	16,370.50
Այգի	17	4,935.67	-	-	-	-	-	-	17	4,935.67
Առևտրային	8	1,689.56	-	-	2	267.32	-	-	10	1,956.88
Ոչ բնակելի	3	73.25	-	-	-	-	-	-	3	73.25
Արդյունաբերական	1	329.05	1	190.10	2	2,616.90	-	-	4	3,136.05
Ընդամենը	43	8,301.54	1	190.10	30	13,511.02	11	4,577.72	85	26,580.38

2.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա

2.4.1 Բնակելի շենքեր և շինություններ

- 50) Ընդհանուր առմամբ, Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հատվածը ազդեցության կենթարկի 170 բնակելի շենքեր և շինություններ: Դրանք ներառում են 8 բնակարաններ՝ 5 օժանդակ կառույցներով, 39 առանձնատներ և 118 օժանդակ կառույցներ: 39 ազդեցության ենթակա բնակելի տները բաղկացած են 57 առանձին շինություններից: Յուրաքանչյուր շինություն գնահատվել է առանձին, քանի որ փոխարինման արժեքը հաշվարկվել է յուրաքանչյուր առանձին շինության նյութի հիման վրա: Սրանցից 109 օժանդակ կառույցներ պատկանում են բնակելի հիմնական շինությունների, որոնք ազդեցության կենթարկվեն, մինչդեռ 9 օժանդակ կառույցներ պատկանում են տնային տնտեսությունների, որոնց հիմնական բնակելի շինություններն ընդհանրապես ազդեցության չեն ենթարկվի: Ընդհանուր առմամբ, 43 հողակտորների վրա տեղակայված ազդեցության ենթակա բոլոր բնակելի շենքերի և շինությունների արդյունքում ազդեցության կենթարկվեն 62 տնային տնտեսություններ: Այնուամենայնիվ, երկու ԱԵՏՏ-ներ բնակարանների սեփականատերեր են և 1 ԱԵՏՏ բնակելի առանձնատան համասեփականատեր է, սակայն նրանք այնտեղ չեն բնակվում և չեն կորցնի իրենց բնակության փաստացի վայրը:
- 51) Ազդեցության ենթակա շինությունների տարածքը կազմում է 6.903.03 մ²: Ազդեցության ենթակա շինությունները հիմնականում կառուցված են քարից, մետաղից, բետոնից, փայտանյութից և այլն:
- 52) Մեկ ԱԵԱ-ի գույքը ծրագրի արդյունքում ազդեցության չի ենթարկվի, այնուամենայնիվ, գոյություն ունեցող մուտքը դեպի բնակելի հողակտոր կփակվի ավտոմեքենաների համար:

ԱԵԱ-ին կտրամադրվի բավարար փոխհատուցում մյուս կողմից մուտք բացելու և նոր դարպաս տեղադրելու համար:

Աղյուսակ 2-2 Ազդեցությունը բնակելի շենքերի և շինությունների վրա

Անունը	Նյութը	No	Ընդամենը	Հողա-կտորները
			մ ²	No
Ա. Բնակարաններ				
Բնակարան	Քարե	8	423.88	0
Նկուղ	Քարե	2	9.31	
Գետնափոր պահեստ	Հող	1	5.94	
Անավարտ շինություն	Քարե	1	39.83	
Սանհանգույց	Բլոկով շարվածք	1	2.34	
Միջանկյալ ընդհանուր (Ա)		13	481.3	
Բ. Առանձնատներ				
Բնակելի տուն	Քարե, քարե/բետոնե, քարե/մետաղական	39	4143.8	36
Միջանկյալ ընդհանուր (Բ)		39	4143.8	36
Գ. Օժանդակ կառույցներ				
Գ1. Օժանդակ կառույցներ՝ ազդեցության ենթակա հիմնական շինություններով				
Անասնագոմ	Քարե	2	49.62	33
Նկուղ	Բետոնե	7	76.63	
Ավտոտնակ	Քարե	4	122.86	
Ջերմոց	Ապակե	1	48.32	
Հավաքուն	Քարե	2	44.83	
Գետնափոր պահեստ	Քարե	3	12.48	
Ձեղնահարկ	Մետաղական	2	148.5	
Մանսարդ	Քարե, մետաղական	4	171	
Չգործող խանութ/պահեստ	Քարե	2	14.8	
Բաց պատշգամբ	Մետաղական	2	125.3	
Ջրավազան, լողավազան	Քարե, բետոնե	3	13.78	
Ծածկ	Մետաղական	35	656.89	
Պահեստ	Մետաղական, քարե	3	27.63	
Ամառային խոհանոց	Քարե	1	18.76	
Օժանդակ կառույց	Քարե, բլոկով շարվածք, բետոնե, փայտանյութ	33	382.92	
Սանհանգույց	Քարե, փայտանյութ	5	20.04	
Միջանկյալ ընդհանուր (Գ1)	-	109	1934.36	
(Գ2) ՏՏ-ների օժանդակ կառույցները՝ առանց բնակելի տարածքների կորուստների				
Ջերմոց	Մետաղական	1	91.29	5
Չգործող խանութ/պահեստ	Բլոկով շարվածք	1	20.35	
Ջրավազան, լողավազան	Քարե	1	21.4	
Ծածկ	Մետաղական	3	161.86	
Օժանդակ կառույց	Քարե, փայտանյութ	3	48.67	
Միջանկյալ ընդհանուր (Գ2)	-	9	343.57	5
Միջանկյալ ընդհանուր (Գ1+Գ2)	-	118	2277.93	38
Ընդամենը	-	170	6903.03	43

2.4.2 Ոչ բնակելի շենքեր և շինություններ

53) Ընդհանուր առմամբ, ազդեցության կենթարկվեն 33 ոչ բնակելի շինություններ, որոնցից 28-ը պատկանում են ձեռնարկատիրական գործունեություններին և 5-ը ոչ բնակելի/ոչ ձեռնարկատիրական գործունեության շինություններ են, որոնք օգտագործվում են ԱԵԱ-ների կողմից մասնավոր նպատակներով: Ազդեցության ենթակա 28 հիմնական և օժանդակ շինությունները պատկանում են 8 ձեռնարկատիրական գործունեությունների, որոնք տեղակայված են 11 հողակտորների վրա: Այս շինությունները զբաղեցնում են 984.44 մ² տարածք, որից 377 մ² ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով: Ձեռնարկատիրական գործունեություններից մեկն ունի ազդեցության ենթակա միայն օժանդակ կամ չօգտագործվող շինություններ: Հետևաբար, ձեռնարկատիրական գործունեությունը ազդեցության չի ենթարկվի շինությունների կրած ազդեցության հետևանքով: 5 ոչ ձեռնարկատիրական կառույցներ միայն մասնավոր օգտագործման նպատակով են և գտնվում են երեք հողակտորների վրա՝ ԱԵԱ-ների բնակարանների դիմաց:

Աղյուսակ 2-3 Ազդեցությունը ոչ բնակելի շինությունների վրա

No	Կառույցի/շինության տեսակը	Նյութը	No	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով քառ. մ	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով քառ. մ	Ընդամենը քառ. մ	Հողակտորների No
Ա. Ոչ ձեռնարկատիրական կառույցներ							
1	Ծածկ	Մետաղական	1	-	4.00	4.00	4
2	Պահեստային օժանդակ կառույց	Բլոկով շարվածք	1	-	6.44	6.44	
	Գետնափոր	Հողից	1	-	6.00	6.00	
3	Ավտոտեխսպասարկման հոր (մասնավոր օգտագործման համար)	Քարե	1	-	2.70	2.70	
4	Ավտոտնակ	Քարե	1	0	24.12	24.12	
Միջանկյալ ընդհանուր (Ա)			5	-	43.26	43.26	
Բ. Ձեռնարկատիրական կառույցներ							
Ձեռնարկատիրական գործունեություն N 1	Չգործող խանութ	Քարե	1	-	43.69	43.69	2
	Ծածկ	Մետաղական/Քարե	1	-	25.58	25.58	
	Ծածկ	Մետաղական	1	-	39.67	39.67	
	Բենզալցակայան	Քարե	1	37.30	-	37.30	
Ձեռնարկատիրական գործունեություն N 2	Առանձին տաղավար սրճարանում	Քարե	1	-	19.41	19.41	1
	Ծածկ	Մետաղական	1	-	23.50	23.50	
Ձեռնարկատիրական գործունեություն	Արհեստանոց	Քարե	1	-	10.68	10.68	2
	Մանհանգույց	Քարե	1	-	2.51	2.51	
	Շինություն	Փայտանյութ	1	-	6.93	6.93	

No	Կառույցի/շինության տեսակը	Նյութը	No	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով քառ. մ	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով քառ. մ	Ընդամենը քառ. մ	Հողակտրների No
N 3	Շինություն	Քարե	1	-	35.77	35.77	
	Ծածկ	Մետաղական	1	-	75.14	75.14	
	Արհեստանոց	Մետաղական	1	144.50	-	144.50	
	Արհեստանոց	Քարե	1	37.40	-	37.40	
Ձեռնարկատիրական գործունեություն N 4	Ավտոտեխսպասարկման հոր	Քարե	1	-	4.35	4.35	1
	Ծածկ	Մետաղական	1	-	5.80	5.80	
	Աստիճաններ	Քարե	1	-	1.68	1.68	
Ձեռնարկատիրական գործունեություն N 5	Ավտոտեխսպասարման կետ	Քարե	1	132.10	-	132.10	1
Ձեռնարկատիրական գործունեություն N 6	Ավտոտնակ/ավտոտեխսպասարման կետ	Քարե	1	67.20	-	67.20	1
	Աստիճաններ	Մետաղական/բետոնե	1	18.90	-	18.90	
	Ավտոտեխսպասարկման հոր	Քարե	1	-	6.65	6.65	
Ձեռնարկատիրական գործունեություն N 7	Մթերային	Քարե	1	-	24.45	24.45	1
	Ծածկ	Մետաղական	1	-	5.34	5.34	
	Խանութ	Քարե	1	1.53	-	1.53	
Ձեռնարկատիրական գործունեություն N 8 (ձեռնարկատիրական գործունեությունը չի խաթարվում այս կառույցների կորստի հետևանքով)	Չգործող խանութ	Քարե	1	59.20	-	59.20	2
	Չգործող հացի փուռ	Քարե	1	103.67	-	103.67	
	Պահակակետ	Քարե	1	5.97	-	5.97	
	Ծածկ	Մետաղական	1	-	38.62	38.62	
	Դեկորատիվ ջրավազան	Քարե	1	-	6.90	6.90	
Միջանկյալ ընդհանուր (Բ)			28	608	377	984.44	11
Ընդամենը (Ա+Բ)			33	608	420.26	1,027.7	15

2.4.3 Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ

54) Տրանշ 1 ՀՕՏՕ 3 հատվածը ազդեցության կենթարկի 9 ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող կառույց, որոնք տեղակայված են ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող 6

հողակտորների վրա: Տեղափոխության ծախսերը ԱԵԱ-ներին կվճարվեն՝ շինությունները տեղափոխելու համար:

Աղյուսակ 2-4 Ազդեցությունը ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող կառույցների վրա

Ազդեցության ենթակա շինությունների տեսակը	Նյութը	Շինությունները	Ազդեցության ենթակա մակերևույթը
		No	մ ²
Տաղավար	Մետաղական	3	22.53
Տաղավար	Փայտե	1	10.89
Մետաղական տուն	Մետաղական	1	21.00
Ավտոտնակ	Մետաղական	1	20.63
Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող ծածկ	Մետաղական	1	7.30
Վառելիքի լցման աշտարակ և ցուցավահանակ	Մետաղական	1	-
Բենզինի տարրա	Մետաղական	1	-
Ընդամենը	-	9	82.34

2.4.4 Ցանկապատեր և այլ բարելավումներ

55) Ընդհանուր առմամբ, 649.04 գծամետր ցանկապատ և 1,440.85 մ² քարե պատ/ցանկապատ, որոնք տեղակայված են 42 հողակտորների վրա կենթարկվեն ազդեցության S1 ՀՕՏՕ 3-ի արդյունքում: Ընդհանուր երկարությունից 649.04 գծամետր ցանկապատ այլ տեսակի մետաղից է, մինչդեռ 1,226.79 մ²-ին կառուցված է տուֆից (տեղական ծագում ունեցող հրաբխային ապար): Ընդհանուր առմամբ, 39 տնային տնտեսություններ ազդեցության կենթարկվեն ցանկապատերի կորստի հետևանքով:

Աղյուսակ 2-5 Ազդեցությունը ցանկապատերի և պատերի վրա

Նյութը	Ամբողջը	
	Երկարությունը	Տարածքը
	մ	մ ²
Մետաղական Ա	552.64	-
Մետաղական Բ	96.4	-
Տուֆե/քարե Ա	-	448.64
Տուֆե/քարե Բ	-	96.6
Տուֆե/քարե Գ	-	104.16
Տուֆե/քարե Դ	-	197.83
Տուֆե/քարե Ե	-	108.14
Տուֆե/քարե Զ	-	251.9
Տուֆե /մետաղական	-	19.52
Երկաթ- բետոնե սալեր/քարե Ա	-	198.4
Երկաթ- բետոնե սալեր/քարե Բ	-	15.66
Ընդամենը	649.04	1,440.85

56) ԱԵԱ-ները բարելավումներ են իրականացրել 46 հողակտորների վրա, որոնք չափազրվել և հաշվարկվել են փոխհատուցման համար: Ազդեցության ենթակա հողերի վրա առկա են ԱԵԱ-

ների կողմից կառուցված բետոնե, ասֆալտապատ և աղյուսե մակերեսներ: Զգալի ազդեցության են ենթարկվել բետոնապատ աշխատանքային տարածքները, որը կազմում է 2,425.16 մ²: Ընդհանուր առմամբ, 2,980.88 մ² բարելավում ենթարկվում է ազդեցության, որը կփոխհատուցվի:

Աղյուսակ 2-6 Ազդեցությունը բարելավումների վրա

Տեսակը	Նյութը	Հողակտորները	Տարածքը	No
		No	մ ²	
Տարածք	Ասֆալտ	5	315.36	-
Տարածք	Բետոնապատ	40	2425.16	-
Տարածք	Բետոնե սալեր	3	176.99	-
Տարածք	Սալ	1	47.96	-
Աղյուսե	Աղյուս	1	-	2
Դարպաս	Մետաղ	2	13.8	-
Բուխարի	Աղյուս	1	-	1
Թոնիք	Աղյուս	1	-	1
Մանղալ	Աղյուս	2	-	2
Դուռ	Մետաղական	1	1.61	-
Ընդամենը		46	2980.88	6

2.5 Մշակաբույսեր

57) Թեև ազդեցության ենթակա տարածքը քաղաքային է, որոշ բնակիչներ աճեցնում են բանջարեղեն իրենց տնային տնտեսություններին օժանդակություն ապահովելու նպատակով: Սովորաբար, բանջարեղեններն աճեցվում են ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա գտնվող այգիներում կամ տնամերձ այգիներում: Այնուամենայնիվ, «գյուղատնտեսական» կորստի հասկացությունն այս դեպքում այլ հարթության վրա է, քան գյուղական չափորոշիչների մակարդակում: Այս ԱԵԱ-ների համար գյուղատնտեսությամբ զբաղվելը կենսակերպ չէ, այլ՝ օժանդակություն իրենց տնային տնտեսություններին: Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հատվածը ազդեցության կենթարկի 20 ԱԵՏՏ-ների կողմից օգտագործվող 15 հողակտորների վրա գտնվող մշակաբույսերը: Առավել հաճախ աճեցվում են ելակ, կանաչի և կարտոֆիլ: Արդյունքում, ընդհանուր առմամբ, տարբեր տեսակի բանջարեղենի տարեկան կորուստը կկազմի 588.648 կգ:

Աղյուսակ 2-7 Ազդեցությունը մշակաբույսերի վրա

Մշակաբույսի տեսակը	Տարեկան բերքատվությունը	Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը
	կգ/ մ ²	մ ²	կգ
Գետնախնձոր	2.86	5	14.3
Ելակ	0.62	160	99.2
Լոբի	2.86	22	62.92
Լոլիկ	4.42	20	88.4
Կանաչի	2.86	45	128.7
Կարտոֆիլ	1.84	38	69.92
Սխտոր	1.07	21	22.47
Սմբուկ	2.86	17	48.62

Մշակարարյախ տեսակը	Տարեկան բերքատվությունը	Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը
	կգ/ մ ²	մ ²	կգ
Պղպեղ	2.63	9	23.67
Սոխ	2.36	8	18.848
Սեխ	2.90	4	11.6
Ընդամենը	-	349	588.648

2.6 Ծառեր

- 58) Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հաստվածում 3603 մրգատու ծառեր և թփեր կենթարկվեն ազդեցության: Դրանցից 2,245-ը մրգատու թփեր են, իսկ 1,358-ը` մրգատու ծառեր:
- 59) Ազդեցության ենթակա թփերի մեծամասնությունը կազմում են խաղողը, մոշը և հաղարջը: Ազդեցության ենթակա ծառերի մեծամասնությունը կազմում են բալենին, խնձորենին և սալորենին: Ընդհանուր առմամբ, 59 տնային տնտեսություններ կենթարկվեն ազդեցության մրգատու ծառերի և թփերի կորստի արդյունքում: Սեփականատերերը կստանան լիարժեք փոխհատուցում ազդեցության ենթակա ծառերի դիմաց: Ազդեցության ենթակա մրգատու ծառերի և թփերի վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2-8 Ազդեցությունը մրգատու ծառերի և թփերի վրա

Տեսակը	Նորատունկ	Դեռևս ոչ բերքատու	Բերքատու	Ընդամենը
	No	No	No	No
Ա. Մրգատու թփեր				
Ազնվամորի	-	100	350	450
Թզենի	8	1	73	82
Խաղող	128	22	532	682
Հաղարջենի	4	38	460	502
Տիլենի	-	-	2	2
Մոշենի	5	7	26	38
Ազնվամորի	-	76	413	489
Միջանկյալ	145	244	1,856	2,245
Բ. Մրգատու ծառեր				
Բալենի	122	29	216	367
Դեղձենի	7	-	84	91
Ընկուզենի	20	10	34	64
Թթենի	32	6	69	107
Խնձորենի	25	18	106	149
Ծիրանենի	26	1	83	110
Արքայաթուզ	-	-	7	7
Կեռասենի	11	5	49	65
Հոն	1	2	8	11
Մարգախնձոր	0	2	28	30
Նշենի	6	-	4	10
Նոենի	4	-	27	31
Շլորենի	11	9	61	81

Տեսակը	Նորատունկ	Դեռևս ոչ բերքատու	Բերքատու	Ընդամենը
	No	No	No	No
Մալոբենի	41	23	86	150
Մերկկիլենի	8	9	38	55
Տանձենի	2	2	19	23
Փշատենի	0	3	1	4
Սզնի	1	-	1	2
Մանդարին	1	-	-	1
Միջանկյալ	318	119	921	1,358
Ընդամենը (Ա.+Բ)	463	363	2,777	3,603

60) Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հատվածում ազդեցության կենթարկվեն 274 փայտանյութ տվող ծառեր: Ազդեցության ենթակա փայտանյութ տվող ծառերի մեծամասնությունը կազմում է հացենին և թեղին (123 և 92): Ազդեցության ենթակա բոլոր ծառերի մոտ 40%-ը մեծահասակ ծառեր են: 28 տնային տնտեսություններ ազդեցության կենթարկվեն փայտանյութ տվող ծառերի կորստի արդյունքում: Ազդեցության ենթակա ծառերի սեփականատերերը կփոխհատուցվեն առանց ազդեցության ենթակա ծառերից ստացվող փայտանյութի արժեքի մասհանումների:

Աղյուսակ 2-9 Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա

Տեսակը	Նորատունկ	Միջին հասակի	Հասուն	Ընդամենը
	No	No	No	No
Ակացիա	2	-	4	6
Այլանտուս	5	-	-	5
Այծուռ	5	-	-	5
Բարդի	-	24	9	33
Թեղի	5	3	84	92
Թխկի	-	-	1	1
Հացենի	28	90	5	123
Ուռենի	1	-	6	7
Կաղնի	1	-	-	1
Հուդայածառ	1	-	-	1
Ընդամենը	48	117	109	274

61) Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հատվածում ազդեցության կենթարկվեն նաև 188 դեկորատիվ ծառեր: Ինչպես ցույց է տրված ստորև բերված աղյուսակում, առավելապես ազդեցության կենթարկվեն եղրևանու ծառերը: Տրանշ 1 ՀՕՏՕ 3-ի հատվածը հարուստ է դեկորատիվ թփերով և պարտեզային ծաղիկներով: Գրեթե յուրաքանչյուր տուն ունի ծաղկառատ պարտեզներ: 1,337 դեկորատիվ թփեր և 1,633 տարբեր տեսակի պարտեզային ծաղիկներ կենթարկվեն ազդեցության: Զգալի ազդեցության կենթարկվեն հիրիկն ու ազնիվ վարդը: Ազդեցության ենթակա բոլոր դեկորատիվ ծառերն ու թփերը պատկանում են 50 տնային տնտեսությունների:

Աղյուսակ 2-10 Ազդեցությունը դեկորատիվ ծառերի և թփերի վրա

Տեսակը	Փոքր	Միջին	Մեծ	Ընդամենը
	Ծառեր	Ծառեր	Ծառեր	Ծառեր
	No	No	No	No
Ա. Դեկորատիվ ծաղիկներ				
Ծաղիկներ	96 քառ.մ.			
Գազոն	22 քառ.մ.			
Քաղվարդ	-	78	98	176

Տեսակը	Փոքր	Միջին	Մեծ	Ընդամենը
	Ծառեր	Ծառեր	Ծառեր	Ծառեր
	No	No	No	No
Հիրիկ	2	484	691	1,177
Քրիզանթեմ	-	151	0	151
Շուշան	-	85	20	105
Երիցուկ	-	4	6	10
Կաննա	-	2	1	3
Միսիմբրիում	-	-	10	10
Կալա	-	1	-	1
Միջանկյալ ընդհանուր (Ա)	2	805	826	1,633
Բ. Դեկորատիվ թփեր				
Ազնիվ վարդ	45	288	420	753
Մազլցող վարդ	-	7	43	50
Վայրի խաղող	-	95	189	284
Տոսախ	3	2	4	9
Ցաքի	7	-	-	7
Սիրիական վարդ	-	-	8	8
Ֆորցիսիա	-	-	2	2
Հասմիկ	-	-	30	30
Թեյի վարդ	-	5	23	28
Տեկոմա	-	13	45	58
Բադեղ	-	-	1	1
Արմավաշուշան	7	2	12	21
Բենժամեն	-	-	1	1
Կոկոռշ	-	30	-	30
Գնդաձև թույա	-	1	-	1
Դեղնածաղիկ	-	-	10	10
Չյունապտղիկ	-	-	7	7
Գայլուկ	-	-	30	30
Հագագ	-	2	4	6
Ամորֆա	-	-	1	1
Միջանկյալ ընդհանուր (Բ)	62	445	830	1,337
Գ. Դեկորատիվ ծառեր				
Արծաթափայլ եղևենի	-	-	2	2
Եղևնի	2	0	-	2
Եղրևանի	4	26	55	85
Թույա	-	2	1	3
Վիրջինյան գիհի	-	-	2	2
Սոճենի	30	-	-	30
Գիհի	0	64	-	64
Միջանկյալ ընդհանուր (Գ)	35	92	60	187
Ընդամենը	100	1,342	1,716	3,158

2.7 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և եկամտի վրա

- 62) Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության բնույթի և շրջանակի հիման վրա սույն ՀՕՏՕ համար բացահայտվել են միայն ձեռնարկատիրական գործունեության մշտական կորուստները: Այն ներառում է կորուստները, որոնք ներառում են այն կորուստները, որոնք առաջացել են հիմնական շենքերը քանդելու հետևանքով: ԱԵԱ-ները կստանան կանխիկ փոխհատուցում՝ 1 տարվա գուտ եկամտի չափով:
- 63) Ընդհանուր առմամբ կան ազդեցության ենթակա 7 ձեռնարկատիրական գործունեություններ սույն Ենթաձրագրի տարածքում: Դրանք պատկանում են յոթ տնային տնտեսությունների՝ ազդեցության ենթակա 32 անձանցով: Բոլոր 7 ձեռնարկատիրական գործունեությունները կկրեն մշտական ազդեցություն: Դրանցից 5-ը կկորցնեն շինությունը՝ ձեռնարկատիրական գործունեության հետ մեկտեղ, իսկ երկուսը կկորցնեն միայն ձեռնարկատիրական գործունեությունը, քանի որ նրանք ազդեցության ենթակա շինությունների սեփականատերերը չեն և ոչ էլ վարձակալներ են: Ժամանակավոր ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեություններ չկան: Այնուամենայնիվ, եթե շինարարության ժամանակահատվածում որևէ ձեռնարկատիրական գործունեություն ազդեցության կենթարկի ժամանակավոր փակված մուտքերի հետևանքով, ապա այդ ազդեցությունը կզնահատվի և ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատված օրերի/ամիսների դիմաց՝ համաձայն սահմանված իրավունքների: Ազդեցության և եկամտի վերականգնման վերաբերյալ մանրամասները ներկայացված են Գլուխ 7-ում՝ «Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում»:

Աղյուսակ 2-11 Մշտական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա

No	Նկարագրություն	Հարկային հայտարարագրով	Առանց հարկային հայտարարագրի	Հողակտորների քանակը
		No	No	
1	Ավտոմեքենաների տեխսպասարկում	1	-	2 (ձեռնարկատիրական գործունեություն No 1-ը 2 հողակտորների վրա է, իսկ ձեռնարկատիրական գործունեություն No 2-ը 1 հողակտորի վրա է)
2	Ավտոմեքենաների տեխսպասարկում	1	-	
3	Մթերային խանութ	1	-	1
4	Բենզալցակայան	1	-	1
5	Ավտոմեքենաների տեխսպասարկում	-	1	1
6	Սրճարան/սննդի կետ	1	-	1
7	Մետաղական արհեստանոց/դարբնոց	1	-	2
Ընդամենը		6	1	8

2.8 Ազդեցությունը զբաղվածության վրա

- 64) Ձեռնարկատիրական գործունեության հիմնական շինությունների քանդման արդյունքում ձեռնարկատիրական գործունեության տեղափոխման հետևանքով 5 աշխատողներ 5 տնային տնտեսություններից մշտապես կկորցնեն իրենց աշխատանքները:

Աղյուսակ 2-12 Ազդեցությունը զբաղվածության վրա

Կորուստ	Ազդեցության ենթակա աշխատողներ
	No
Զբաղվածության մշտական կորուստ	5
Ընդամենը	5

2.9 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների և ազդեցության ենթակա անձանց տվյալների ամփոփում

- 65) Մարդահամարի արդյունքում բացահայտվեցին 90 տնային տնտեսություններ, ներառյալ՝ սեփականատերեր, վարձակալներ և հողերի/շինությունների օգտագործողներ, ձեռնարկատիրական գործունեության սեփականատերեր և աշխատողներ, որոնցից 86-ը ընտանիքներ են և 4-ը՝ ընկերություններ: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ-ներ) և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-ներ) տարբեր կատեգորիաների վերաբերյալ տվյալներն՝ ըստ ազդեցության տեսակի, ինչպես նաև զուտ թվերը՝ առանց կրկնահաշվարկի, ներկայացված են ստորև բերված ԱԵՏՏ/ԱԵԱ-ների տվյալների ամփոփագրում: Ընդհանուր առմամբ, ՀՕՏՕ 3-ի ճանապարհահատվածն ազդեցության կենթարկի 70 ԱԵՏՏ-ների հողակտորներ, որոնցից 38 ԱԵՏՏ-ներ մասնավոր սեփականատերեր են, ինչպես նաև 73 ԱԵՏՏ-ների շենքերը և շինությունները, որոնցից 62-ը՝ բնակելի և 11-ը ոչ բնակելի շինություններ են: Բնակելի շինությունները կորցնող 62 ԱԵՏՏ-ներից 10 ԱԵՏՏ-ներ կորցնում են բազմահարկ շենքերում գտնվող իրենց բնակարանները: Այս 10 ԱԵՏՏ-ներից երկուսը համասեփականատերեր են և չեն կորցնի իրենց բնակության վայրը: 52 ԱԵՏՏ-ների բնակելի շինությունները կենթարկվեն ազդեցության, որոնցից 41 ԱԵՏՏ-ներ այս տների սեփականատերերն են և ապրում են այնտեղ: 1 ԱԵՏՏ չի ապրում այն տանը, որը ազդեցության կենթարկվի, 4 ԱԵՏՏ-ներ տների սեփականատերեր չեն, սակայն ապրում են այնտեղ առանց վարձավճարի և 6 ԱԵՏՏ-ներ կկորցնեն միայն բնակելի օժանդակ շինությունները և իրենց բնակության վայրից չեն վերաբնակեցվի:
- 66) Ազդեցության կենթարկվի 5 ԱԵՏՏ-ների զբաղվածությունը և 7 ԱԵՏՏ-ների ձեռնարկատիրական գործունեությունը: 90 ԱԵՏՏ-ներից 56-ը ենթարկվում են զգալի ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելին, և 53 ԱԵՏՏ-ներ պետք է վերաբնակեցվեն: 18 ԱԵՏՏ-ներ խոցելի են:

Աղյուսակ 2-13 Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի

Ազդեցության տեսակը	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը	
Ա. Ազդեցությունը հողի վրա՝ ըստ զբաղեցման կարգավիճակի				
Ա1. Սեփականատերեր	38	38	189	-
Ա2. Համայնք				
(1) Վարձակալություն	1	1	1	-
(2) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով	38	22	84	-15 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում (1)

Ազդեցության տեսակը	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը	
օգտագործվող				
(3) Օրինականացման գործընթացում	16	9	42	- 7 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2)
Բ. Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա				
Բ1. Բնակելի շենքեր				
(1) Բնակարաններ (սեփականատերերի կամ համասեփականատերերի կողմից զբաղեցված)	8	4	11	-4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2)
(2) Բնակարաններ (համասեփականատերերի կողմից չզբաղեցված)	2	2	6	-
(3) Բնակելի առանձնատներ (սեփականատերերի կամ համասեփականատերերի կողմից զբաղեցված)	41	0	0	-30 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -7 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
(4) Բնակելի առանձնատներ (համասեփականատերերի կողմից չզբաղեցված)	1	0	0	-1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում
(5) Բնակելի առանձնատներ (վարձ չվճարող բնակիչների կողմից զբաղեցված)	4	4	15	-
(6) Բնակելի օժանդակ կառույցներ	6	0	0	-3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Բ2. Ոչ բնակելի կառույցներ	11	0	0	-4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում (1); -6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2)
Բ3. Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ	7	0	0	-2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2)
Բ4. Ցանկապատեր	39	0	0	-16 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում (1); -19 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Բ5. Դարպասի տեղադրում	1	1	2	-
Գ. Ազդեցությունը ծառերի/մշակաբույսերի վրա				
Գ1. Մրգատու ծառեր և թփեր	59	0	0	-30 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում (1); -21 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -7 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Գ2. Փայտանյութ սովոր ծառեր	28	0	0	-10 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում (1); -12 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Գ3. Դեկորատիվ ծառեր, թփեր, ծաղիկներ	50	0	0	-28 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում (1); -15 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Գ4. Մշակաբույսեր	20	0	0	-10 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2);

Ազդեցության տեսակը	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը	
				-5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3)
Դ. Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա				
Դ1. Մշտական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի առկայությամբ	6	4	16	-2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2)
Դ2. Մշտական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի բացակայությամբ	1	0	0	-1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում
Ե. Ազդեցությունը զբաղվածության վրա				
Ե. Զբաղվածության մշտական կորուստ	5	5	25	
Զ. ԱԵՏՏ-ների խոցելիությունը				
Զ. Խոցելի ԱԵՏՏ-ներ	18	0	0	-4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -8 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում (3); -3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Բ1-ում(1); -1 ԱԵՏՏ ընդգրկված է Բ1-ում (2); -1 ԱԵՏՏ ընդգրկված է Բ5-ում
Է. Վերաբնակեցման ազդեցություն				
Է1. Ձեռնարկատիրական գործունեության վայրի տեղափոխում	7	0	0	-1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում; -2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -4 ԱԵՏՏ-ներ Դ1
Է2. Բնակավայրից վերաբնակեցում	53	0	0	-30 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում; -11 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (2); -4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում (3); -4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Բ1-ում (1); -4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Բ1-ում (5)
Ընդամենը	-	90	391	

2.9.1 Զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններ

67) Համաձայն ՔԿԶՆԾ ՀՕՏԵ-ի՝ միայն այն տնային տնտեսությունները, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելին, և նրանք, ովքեր կվերաբնակեցվեն իրենց բնակելի շենքերից, համարվում են զգալի ազդեցության ենթակա և, հետևաբար, իրավասու են ստանալ զգալի ազդեցության ենթակա անձանց հասանելիք նպաստը: Ընդհանուր առմամբ, 56 ԱԵՏՏ-ներ կփոխհատուցվեն որպես զգալի ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ, քանի որ ազդեցության ենթակա հողակտորներից կորցրած մրգատու ծառերի և մշակաբույսերի հետևանքով նրանք կկորցնեն 10% կամ ավելի գյուղատնտեսական եկամուտ և/կամ կվերաբնակեցվեն: ԱԵՏՏ-ներից յուրաքանչյուրը կստանա լրացուցիչ փոխհատուցում 1 տարվա

բերքի համախառն եկամտի չափով գյուղատնտեսական եկամտի զգալի կորստի դիմաց: Ազդեցության և եկամտի վերականգնման վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են «Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում» Գլուխ 7-ում:

Աղյուսակ 2-14 Ազդեցության աստիճանը

Ազդեցության աստիճանը		Ընդամենը	
		ԱԵՏՏ	ԱԵԱ
		No	No
1	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10% -ը	56	263
2	Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներ	53	266

2.9.2 Ազդեցությունը աղքատների և խոցելի խմբերի վրա

68) Համաձայն ՔԿԶԼԾ ՀՕՏԵ-ի հավելվածի՝ «խոցելիությունը» որոշվում է հետևյալ կերպ. «Ընտանեկան նպաստի համակարգում (ԸՆՀ) գրանցված անձինք, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: Սոցիալապես խոցելի անձինք այն տնային տնտեսություններն են, որոնք ղեկավարվում են ընտանիքը կերակրող կանանց կամ ծերության կենսաթոշակ ստացող անձի կողմից և չեն ներառում այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ՝ կայուն աշխատանքով, որն առնվազն ապահովում է նվազագույն ամսական աշխատավարձ, բացի պարտադիր զինծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարեկան ցերեկային ուսուցմամբ սովորողները»: Հայաստանի Հանրապետությունը ներդրել է սոցիալական ապահովության ծրագիր, որը կոչվում է Ընտանեկան նպաստի համակարգ (ԸՆՀ): Այն սոցիալական աջակցություն է ապահովում աղքատներին: Այս աջակցությունից օգտվելու համար ընտանիքը պետք է դիմում ներկայացնի և համապատասխանի հիմնական չափանիշներին, որոնք գնահատվում են ըստ տնային տնտեսության չափի և կազմի, խոցելիության և եկամտի: Սույն ՀՕՏԵ ներքո ԸՆՀ-ում գրանցված են 5 ԱԵՏՏ-ներ: 15 տնային տնտեսություններ ղեկավարվում են կին կամ տարեց ԱԵԱ-ների կողմից: Նրանք կփոխհատուցվեն որպես խոցելի ընտանիքներ և կստանան վերականգնման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ընդհանուր առմամբ, 18 ԱԵՏՏ-ներ կփոխհատուցվեն որպես խոցելի ԱԵՏՏ-ներ:

Աղյուսակ 2-15 Ազդեցությունը աղքատների և խոցելի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա

Տեսակը	Ընդամենը	
	ԱԵՏՏ	ԱԵԱ
	No	No
Աղքատ ԱԵՏՏ-ներ	5	15
Կանանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ	15	38
Տարեցների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ	6	10
Խոցելի ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը՝ առանց կրկնահաշվարկի	18	47

2.9.3 ԱԵԱ-ների սեռը և էթնիկ ծագումը

69) Մարդահամարը ցույց է տալիս, որ ընդհանուր ԱԵԱ-ներից 210 (54%)-ը իգական, իսկ 177 (46 %)-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ են:

Աղյուսակ 2-16 Ազդեցության ենթակա անձանց սեռը

Սեռը	No	Ամբողջի %
Արական	177	46%
Իգական	210	54%
Ընդամենը	387	100%

70) 387 ԱԵԱ-ներից 385-ը հայեր են (99.5 %), իսկ 2-ը՝ ռուսներ (0.5 %):

Աղյուսակ 2-17 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը

Ազգությունը	ԱՆՏՏ անդամներ	
	Ոս	Ամբողջի %
Հայ	385	99.50%
Ռուս	2	0.50%
Ընդամենը	387	100%

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1 Ընդհանուր տեղեկություններ

71) Սույն գլխում ներկայացվում են ազդեցության ենթակա բնակչության և համայնքի սոցիալ-տնտեսական հիմնական առանձնահատկություններին առնչվող եզրակացությունները, որոնք պատրաստվել են առկա երկրորդական տվյալներից, սոցիալ-տնտեսական հարցումների միջոցով հավաքագրված տվյալներից, ինչպես նաև ՀՕՏՕ 3-ի տարածքում ընդգրկված Ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում ձեռնարկված մարդահամարի տվյալներից: Հարցումների հիմնական նպատակն է հասկանալ Ծրագրի տարածքում ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների առկա սոցիալ-տնտեսական վիճակը և խոցելիությունը, օգտագործել տվյալները ՀՕՏՕ 3-ի բյուջեի նախապատրաստման համար և բացահայտել աջակցության լրացուցիչ կարիք ունեցող խմբերին և անձանց:

3.2 Հետազոտության մեթոդաբանությունը

72) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտությունն (ՄՏՀ) իրականացվել է 2013 թվականի մայիսի 14-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում: Ազդեցության ենթակա բոլոր ԱԵԱ-ները, այդ թվում՝ ազդեցության ենթակա անշարժ գույքի սեփականատերերը, վարձակալները և օգտագործողները, մշտական ազդեցության ենթակա միջին և փոքր ձեռնարկատիրական գործունեության սեփականատերերը և ԱԵԱ-ները, ովքեր մշտապես կորցնելու են իրենց աշխատանքը, հարցվել են հարցաթերթիկների և հեռախոսի միջոցով (հավելված 3, 4, 5 և 6): Յուրաքանչյուր հարցաթերթիկի լրացման համար 30-40 րոպե է պահանջվել: Հավաքագրված տվյալները մշակվել են՝ օգտագործելով վիճակագրական փաթեթ՝ ՄԳՎՓ 13-ը: Տարածքում կան 86 ազդեցության ենթակա տնային տնտեսություններ, որոնցից հարցվել են 84 տնային տնտեսությունները: Սա կազմում է ընտրանքի 98.8%-ը: Ազդեցության ենթակա գույքի (ցանկապատ) մեկ սեփականատեր հասանելի չէր հետազոտության ընթացքում:

3.3 Ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը

3.3.1 Ընտանիքի կազմը և սոցիալ-տնտեսական դասակարգումը

73) Մարդահամարի արդյունքում բացահայտվեցին ազդեցության ենթակա 85 տնային տնտեսություններ՝ ընդհանուր 381 անդամներով, որոնց 99.5%-ը հայեր են և 0.5%-ը՝ ռուսներ: Միջին հաշվով 4.64 անձ կա յուրաքանչյուր ազդեցության ենթակա տնային տնտեսությունում: Հետազոտության ենթարկված 84 տնային տնտեսությունների ղեկավարների 73.8%-ն են ամուսնացած, իսկ այլ անդամների՝ 41.5%-ը, մինչդեռ տնային տնտեսության ղեկավարների

3.6%-ը և տնային տնտեսության այլ անդամների 18%-ը միայնակ է: Տնային տնտեսության ամուսնալուծված ղեկավարները (6%) և տնային տնտեսության այլ անդամները (3.3%) զգալի տոկոս չեն կազմում:

Աղյուսակ 3-1 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների ամուսնական կարգավիճակը

Ամուսնական կարգավիճակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Ամուսնացած	62	73.8	127	41.5
Ամուրի	3	3.6	55	18
Այրի	14	16.7	15	4.9
Ամուսնալուծված	5	6	10	3.3
Կիրառելի չէ /անչափահասներ	-	-	99	32.4
Ընդհանուր	84	100	306	100

3.3.2 Մեռը

74) USZ տվյալները ցույց են տալիս, որ կին ԱԵԱ-ները 211-ն են (54.1 %), իսկ տղամարդ ԱԵԱ-ները՝ 179 (45.9 %): ՀՀ օրենսդրությունը և մասնավորապես Հայաստանի Հանրապետության գլխավոր օրենքը՝ ՀՀ սահմանադրությունը, կանանց ու տղամարդկանց շնորհում են հավասար իրավունքներ, այդ թվում՝ սեփականության իրավունքի, կրթության, առողջապահության, զբաղվածության, աշխատանքային պայմանների և կատարված աշխատանքի դիմաց վճարման հավասար իրավունք և՛ պետական, և՛ մասնավոր հատվածում, ինչպես նաև հավասար անձնական և ընտանեկան իրավունքներ: Չկա իրավական խտրականություն գույքի, հողատարածքի զբաղեցման, ժառանգության և ձեռնարկատիրական գործունեության իրականացման իրավունքների միջև:

3.3.3 Տարիքը

75) ՀՕՏՕ 3-ի նպատակով հարցված բնակչության տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ 18-35 տարիքային խումբը ամենաներկայացվածն էր (34%, ստորև աղյուսակը): Երիտասարդական համայնքի նկարագիրը նույնիսկ ավելի է արտահայտված, եթե երկու տարիքային խմբերը (0-17 և 18-35) համակցվում են: Նման համեմատությունը ցույց է տալիս, որ բնակչության 66%-ը 35-ից փոքր է: Միայն շուրջ 6.5% - ն է 65 տարեկանից բարձր տարիքում: «Տնային տնտեսության ղեկավար» տարիքային բաշխումը ցույց է տալիս տարիքային կարգերի երկու վիճակագրական օրինակ՝ 56-65 և 46-55:

Աղյուսակ 3-2 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների տարիքային բաշխումը

Տարիքը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ այլ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
0 - 17	0	0%	98	32%
18 - 35	10	12%	104	34%
36 - 45	10	11,9%	34	11%
46 - 55	21	25%	27	9%
56 - 65	33	39,2%	23	8%
66 կամ ավելի	10	11,9%	20	7%

Տարիքը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ այլ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Ընդամենը	84	100%	306	100%

3.3.4 Կրթությունը

76) Հետևյալ աղյուսակում երևում է, որ տնային տնտեսությունների ղեկավարների ավելի քան 80%-ն ունի նվազագույնը միջնակարգ կրթություն: Գրագիտության բարձր մակարդակ (78.6%-ն առնվազն միջնակարգ կրթություն ունի) է նաև արձանագրվում ընտանիքի անդամների մեջ: Տնային տնտեսությունների ղեկավարների շուրջ 21.4%-ն ունի բարձրագույն կրթություն, և տնային տնտեսության այլ անդամների 18.6%-ն ունի բարձրագույն կրթություն: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների անդամների միայն մի փոքր տոկոսն (2 %) ուսյալ չէ:

Աղյուսակ 3-3 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների կրթությունը

Կրթական կարգավիճակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ այլ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Անուսում	0	0	6	2.00%
Տարրական	1	1.2	25	8.20%
Միջին դպրոց	13	15.5	34	11.10%
Միջնակարգ (10 տարի)	21	25	73	23.90%
Ավագ դպրոց (12 տարի)	0	0	9	2.90%
Միջնակարգ մասնագիտական	29	34.5	56	18.30%
Համալսարանի ուսանող (լրիվ դրույքով)	1	1.2	9	2.90%
Համալսարանի ուսանող (հեռակա)	0	0	1	0.30%
Համալսարանի դիպլոմ	18	21.4	57	18.60%
Թերի բարձրագույն կրթություն	1	1.2	1	0.30%
Կիրառելի չէ	0	0	35	11.40%
Ընդամենը	84	100	306	100.00%

3.3.5 Զբաղվածությունը և եկամտի աղբյուրները

77) Զբաղվածության և եկամտի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 84 ԱԵՏՏ-ներից, իսկ տեղեկությունները հաղորդվել են հարցվողների կողմից: ՄՏՀ ընթացքում մեկ ԱԵՏՏ-ից տվյալներ ձեռք չբերվեցին, քանի որ թիմը տեղում չկարողացավ հանդիպել նրան: Մյուս բոլոր ԱԵՏՏ-ները մասնակցեցին հետազոտությանը և պատասխանեցին հարցերին:

78) Տնային տնտեսությունների ղեկավարների ավելի քան երկու երրորդն (67.4%) աշխատանք ունի, մինչդեռ տնային տնտեսության այլ անդամների միայն 32.8%-ն է աշխատում: Այնուամենայնիվ, տնային տնտեսության ղեկավարների 9.8%-ը և տնային տնտեսության այլ անդամների 15.3%-ը գործազուրկ է, սակայն աշխատանք չի փնտրում: Ի լրումն, տնային տնտեսությունների 15 ղեկավարներից 13-ը, ովքեր թոշակառուներ են, աշխատանքի են ընդգրկված նաև մասնավոր ոլորտում: Զբաղվածության վերաբերյալ տվյալները ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վերաբերյալ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 3-4 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների զբաղվածության կարգավիճակը

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ այլ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Աշխատանք ունեցող	62	67.40%	94	32.80%
Թոշակառու	17	18.50%	22	7.70%
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	9	9.80%	44	15.30%
Գործազուրկ և աշխատանք փնտրող	4	4.40%	24	8.40%
Զինծառայողներ	-	-	3	1.00%
Հաշմանդամ	-	-	2	0.70%
Ուսանող, աշակերտ	-	-	64	22.30%
Կիրառելի չէ/6 տարեկանից ցածր	-	-	34	11.80%
Ընդհանուր	92	100.00%	287	100.00%

Աղյուսակ 3-5 Զբաղվածության տեսակը

Զբաղվածության տեսակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ այլ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Քաղաքացիական ծառայող	8	12.1%	38	40.4%
Մասնավոր հատվածի աշխատող	29	43.9%	45	47.9%
Ինքնազբաղված, ձեռնարկատեր	5	7.6%	4	4.3%
Գործատու	11	16.7%	3	3.2%
Գյուղատնտեսության բնագավառում աշխատանք ունեցող (մասնավոր)	12	18.2%	4	4.3%
Գյուղատնտեսության բնագավառում աշխատանք ունեցող (այլ)	1	1.5%	0	0
Ընդամենը	66	100.0%	94	100.0%

79) Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ մասնավոր ոլորտում զբաղվածությունը գերակշռող է ազդեցության ենթակա անձանց շրջանակում (տնային տնտեսության ղեկավարների 43.9%-ը և ընտանիքի այլ անդամների 47.9%-ը): Քաղաքացիական ծառայողների զբաղվածությունը երկրորդ գերակշռող տեսակն է ազդեցության ենթակա տնային տնտեսությունների անդամների շրջանակում: Տնային տնտեսությունների ղեկավարների 19.7%-ն (18.2% և 1.5%) աշխատում է գյուղատնտեսության ոլորտում, սակայն նրանց կեսը քաղաքացիական ծառայողներ են կամ աշխատում են մասնավոր ոլորտում, իսկ գյուղատնտեսությամբ զբաղվում են աշխատանքից հետո՝ որպես լրացուցիչ գործունեություն: Ի լրումն, երկու ԱԵԱ-ներ, ովքեր գյուղատնտեսության մեջ աշխատանքը նշել են որպես իրենց զբաղվածություն, թոշակառուներ են: Ընդամենը 4 ԱԵԱ-ներ են նշել գյուղատնտեսությունը որպես իրենց հիմնական զբաղվածություն: Ընտանիքի այլ անդամները, ովքեր զբաղվում են գյուղատնտեսությամբ, բավականին փոքր թիվ են կազմում (4.3%): Ինքնազբաղվածությունը լայն տարածում չունի ԱԵԱ-ների շրջանում:

3.3.6 Եկամուտներ և ծախսեր

80) Հարցված ընտանիքները հայտնեցին իրենց եկամուտների ու ծախսերի մասին: Ընտանիքի ամսական միջին եկամուտը տարածքում 383,142 ՀՀ դրամ էր կամ շուրջ 943 ԱՄՆ դոլար հետազոտության իրականացման պահի դրությամբ: Ազդեցության ենթակա տնային

ունտեսությունների հիմնական եկամուտն ապահովողները ընտանիքի ղեկավարներն են (67.4% -ը՝ աշխատողներ, իսկ մնացած 18.5%-ը՝ թոշակառուներ են):

Աղյուսակ 3-6 Ինքնահայտարարագրած եկամտի աղբյուրները

Եկամուտների տեսակը	Միջին եկամուտը
	ՀՀ դրամ / ամսական
Աշխատավարձ	166,853
Տարիքային կենսաթոշակ	31,421
Թոշակի այլ տեսակ	31,118
Սոցիալական նպաստ	25500
Արտասահմանից ստացվող դրամական օգնություն	68,750
Հայաստանի տարածքում իրականացվող դրամական օգնություն	85,000
Ընդհանուր	383,142

81) Ընտանիքների միջին ամսական ծախսերը կազմում էին մոտ 264,104.38 ՀՀ դրամ (646 ԱՄՆ դոլար), որից մեծ մասը (42.69 %) ծախսվում էր սննդամթերքի և ըմպելիքների վրա: Հաջորդ հիմնական ծախսերն առնչվում են վարձակալությանը (գույքի վարձակալության դեպքում), որին հետևում են էլեկտրականության, գազի և այլ կոմունալ վարձերը, որոնք ամսական ծախսերը համապատասխանաբար ավելացնում են 11.41 % և 10.8%-ով: Հագուստի և առողջապահության, կամ սոցիալական պարտավորությունների հետ կապված ծախսերում մեծ տարբերություններ չկան: Մրանցից յուրաքանչյուրի համար մարդիկ ծախսում են ամսական եկամտի 2.7%-5.42%-ը: ԱԵԱ-ներն ավելի շատ են ծախսում հանրային տրանսպորտի վրա (7.71%), քան, օրինակ՝ կրթության կամ առողջապահության վրա: Ամսական ծախսերի տվյալներն ամփոփված են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 3-7 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների միջին ամսական ծախսերը

Ինքնահայտարարագրած ամսական ծախսերը	Միջինը, ՀՀ դրամ	Ամսական%
Սննդամթերք և ըմպելիքներ	96,650.00	42.69
Մասնավոր տրանսպորտ /ներառյալ բենզինը/	16,987.50	2.94
Հանրային տրանսպորտ	15,275.00	7.71
Հագուստ	17,706.25	4.86
Առողջապահություն (դեղեր, ծառայություններ)	10,962.50	5.42
Գրթություն (ուսման վարձեր, գրենական պիտույքներ)	14,487.50	3.24
Բջջային հեռախոսի հաշիվներ	6,575.00	2.47
Քաղաքային հեռախոսի հաշիվներ	1,662.50	0.90
Հասարակական ժամանցներ/պարտականություններ	7,512.50	2.70
Էլեկտրաէներգիա, գազ, ինտերնետ և կենցաղապասարկման այլ ծախսեր	21,038.13	10.85
Գույքի վարձ /վարձակալության դեպքում/	9,997.50	11.41
Գյուղատնտեսություն	687.50	.51
Այլ / ընթացիկ ծախսեր	44,562.50	6.48
Ընդհանուր	264,104.38	-

3.3.7 Կենսապայմանների նկարագրությունը

82) Ազդեցության ենթակա գույքի մեծ մասը վատ վիճակում է, բավարար չափով չի պահպանվում/սպասարկվում կամ չի վերանորոգվել երկար ժամանակ: Միայն 6 ԱԵԱ-ներ (56 պատասխաններից) ունեն այլ բնակավայրեր: 68 ԱԵՏՏ-ներ ներկայացրել են իրենց պատկերացումները բնակարանային պայմանների և շրջապատող տարածքի վերաբերյալ: Առավել հաճախ նշվեց ներկա բնակավայրում տարածքի պակասը (48.5%), որին հետևեցին դրան, պատերի և հատակի վիճակը (30.9%), խոնավ պատերը և հիմքերը (27.9%): Ավելին, կաթող տանիքներով և ջեռուցման բացակայությամբ մտահոգված էին ԱԵՏՏ-ների 23.5% և 22.1% -ը (Աղյուսակ 3-8): Երբ հարց տրվեց իրենց արվարձաններում բնակվելու վատ կողմերի մասին, ԱԵԱ-ների կեսից փոքր ինչ պակաս թվով անձինք (48.5%) նշեցին երթևեկության և ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած աղմուկի մասին: Արվարձանի վերաբերյալ նշված այլ թերություններն էին՝ հարևանների առաջացարած աղմուկը, թափոնների խնդիրը և հանցագործությունները տարածքում: Այնուամենայնիվ, նման կարծիք արտահայտող ԱԵԱ-ների թիվն այնքան էլ մեծ չէ (Աղյուսակ 3-9):

Աղյուսակ 3-8 Բնակարանային պայմանները

Բնակարանային պայմանները (ինքնահայտարարագրված)	Քանակը	Տոկոսը
Տարածքի պակաս	33	48.5
Լույսի պակաս	15	22.1
Ջեռուցման պակաս	10	14.7
Կաթող տանիք	16	23.5
Խոնավություն	19	27.9
Մաշված պատուհաններ, դռներ և հատակ	21	30.9

Աղյուսակ 3-9 Թաղամասի վերաբերյալ ԱԵԱ-ների ընկալումները

Թաղամասի պայմանները (ինքնահայտարարագրված)	Քանակը	Տոկոսը
Աղմուկ/հարևաններ	8	11.8
Այլ աղմուկ (երթևեկություն, ձեռնարկատիրական գործունեություն)	33	48.5
Աղբի խնդիր	6	8.8
Հանցագործություն	5	7.4

3.3.8 Ծրագրի մասին իրազեկվածությունը

83) Հարցված ազդեցության ենթակա բոլոր տնային տնտեսություններն (100%) արդեն իսկ լսել էին Ծրագրի մասին: Պատասխանողների 54.7%-71.8%-ը կարծում է, որ ծրագրի հիմնական բացասական ազդեցությունները կլինեն երթևեկության ընդհատումը, անշարժ գույքի գների աճը և առևտրականացումը: Պարզվում է, որ այս խնդիրներն ավելի կարևոր են ԱԵԱ-ների համար, քան տարաբնակեցմանն առնչվող մտահոգությունները (20%): Պատասխանողների շուրջ մեկ երրորդը նշեց համայնքային տարածքների կորստի, ճանապարհային պատահարների ռիսկի մեծացման և սոցիալական ցանցի կորստի մասին, որպես ծրագրի բացասական ազդեցություններ (32.9%, 35.1% և 36%՝ համապատասխանաբար):

84) Պատասխանողների շուրջ երկու երրորդը (75.8) կարծում է, որ նոր բնակիչների ներհոսքը ծրագրի դրական ազդեցությունն է: Սրան հետևում է ձեռնարկատիրական գործունեության

հնարավորությունը (60%) և նոր աշխատատեղերի բացումը (50.8%): Ավելի հեշտ մուտքի հնարավորությունը դեպի այլ թաղամասեր՝ նշվել է որպես դրական ազդեցություն պատասխանողների մեկ երրորդի կողմից:

Աղյուսակ 3-10 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կողմից Օրագրի ընկալումը

Ազդեցության տեսակը	Այո		Ոչ	
	Քանակը	%	Քանակը	%
Օրագրի ընկալվող թերությունները				
Տարաբնակեցում	60	80	15	20
Եկամտի նվազում	64	86.5	10	13.5
Երթևեկության ընդհատում	22	28.2	56	71.8
Ճանապարհային անվտանգության վատթարացում, ճանապարհատրանսպորտային պատահարների մեծացած ռիսկ	48	64.9	26	35.1
Անշարժ գույքի գների ավելացում	25	36.8	43	63.2
Շրջակա միջավայրի վրա ազդեցություն	69	89.6	8	10.4
Առևտրականացում	29	45.3	35	54.7
Մոցիալական ցանցի կորուստ	48	64	27	36
Համայնքային տարածքների կորուստ	51	67.1	25	32.9
Թերություններ չկան	0	0	0	0
Այլ թերություններ	0	0	0	0
Ընդհանուր	416	63	245	37
Օրագրի ընկալվող առավելություններ				
Նոր աշխատատեղերի հնարավորություններ	31	49.2	32	50.8
Հնարավորություններ ձեռնարկատիրական գործունեության համար	28	40.0	42	60.0
Տարածքում/տարածաշրջանում անշարժ գույքի գների աճ	29	42.6	39	57.4
Հասարակական վայրերի ավելի լավ տեսք	56	80.0	14	20.0
Նոր բնակիչների ներհոսք	16	24.2	50	75.8
Դեպի քաղաքի այլ թաղամասեր ավելի հեշտ մուտքի հնարավորություն	50	66.7	25	33.3
Օգուտներ չկան	0	0	0	0
Ընդհանուր	210	51	202	49

4. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

4.1 Ընդհանուր տեղեկություններ

- 85) Համաձայն ԱՔՀ-ի (2009) և ՀՕՏ-ի՝ ԱԵԱ-ները պետք է ամբողջական խորհրդատվություն ստանան, և նրանց պետք է ընձեռվեն ՀՕՏ-ի պլանավորմանը և իրականացմանը մասնակցելու հնարավորություններ: Նույն սկզբունքներով ԱԵԱ-ները պետք է համապատասխան կարգով և ժամանակին տեղեկացվեն Ծրագրի պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՀՕՏ-ի իրականացման ժամանակացույցի և ընթացակարգերի մասին: ԻՄ-ի կողմից ՀՕՏ գործընթացի բոլոր փուլերում պետք է իրականացվի հանրային տեղեկատվության և խորհրդատվության քարոզարշավ: ԻՄ-ն պետք է նաև կազմակերպի ՀՕՏ-ի հրապարակումը: Բացի այդ, ԻՄ-ն պետք է ԱԵԱ-ներին տեղեկացնի փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և վերաբնակեցման մասին:
- 86) Մույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային խորհրդատվության գործընթացի մեխանիզմները, ՀՕՏ-ի հրապարակումը՝ տեղեկատվական նյութերի բաշխման միջոցով, որպեսզի ազդեցության ենթակա անձինք իրազեկվեն իրենց իրավունքների, փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և բողոքների լուծման մեխանիզմի մասին:

4.2 Հանրային լուումներ

- 87) 2010 թվականին ՀՕՏ՝ երկու նախագծային տարբերակները պատրաստելիս, ԻՄ-ն ՇՆՏԱ աջակցությամբ հանդիպումներ և լայնածավալ հանրային լուումներ է իրականացրել ԱԵԱ-ների հետ՝ ի լրումն ոչ պաշտոնական տեղեկատվության ամենօրյա տարածմանը: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 990-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների հրապարակումից հետո, որոնց շնորհիվ հողի օտարման գործընթացն սկսելու և նկարագրության արձանագրությունների կազմման ժամկետները փոփոխվեցին, պաշտոնական տեղեկացման նամակներ ուղարկվեցին բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների բոլոր ազդեցության ենթակա սեփականատերերին և վարձակալներին: 2012թ. դեկտեմբերին, գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման փոփոխությունների հրապարակումից հետո, ըստ որի փոխվել էին հողի օտարման ամսաթվերը, պաշտոնական տեղեկացման նամակներ ուղարկվեցին գերակա հանրային շահ ճանաչված տարածքների ցուցակում ընդգրկված բոլոր ազդեցության ենթակա անձանց և վարձակալներին:
- 88) Հաշվի առնելով նախագծի և ճանապարհի ծրագծի՝ 2012 և 2013 թվականներին կատարված փոփոխությունները և 2012 թվականի հուլիսին իրականացված ՀՕՏ-ի վերանայումը՝ ՀՕՏ՝ 3-ի համար նոր հանրային լուումներ են պահանջվել: Այդ պատճառով օգոստոսի 7-ին կազմակերպվել են նոր հանրային լուումներ 18 ԱԵԱ-ների համար, ովքեր ԱԳԿՊԿ վկայականների հետ կապված որոշ խնդիրներ ունեին, իսկ 2013 թվականի օգոստոսի 26-ին՝

բոլոր ԱԵԱ-ների համար: Հանրային լուսմները կազմակերպվեցին Երևանի քաղաքապետարանում և Շենգավիթ թաղամասի թիվ 75 դպրոցում: Երկու հանրային լուսմների մասին հայտարարվել էր տեղական օրաթերթում: Ի լրումն, բոլոր ԱԵԱ-ները հեռախոսազանգերի միջոցով տեղեկացվել էին հանրային լուսմների ամսաթվի և վայրի մասին: Հանրային լուսմներն իրականացվել են ԾԻԳ-ի կողմից՝ ՄՆՇՎ խորհրդատուների աջակցությամբ:

- 89) Հանրային լուսմների հիմնական նպատակն է ազդեցության ենթակա անձանց տեղեկացնել ծրագրի, հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի, չափագրման մանրամասն հետազոտության և Ծրագրի համար ընդունված գնահատման մեթոդաբանության վերաբերյալ, ինչպես նաև իրազեկել իրենց իրավունքների և իրավասությունների մասին:
- 90) Մասնակիցների թիվը՝ ըստ յուրաքանչյուր հատվածի, ինչպես նաև ՀՕՏՕ 3-ի հանրային լուսմների ամսաթվերի, ամփոփված է ստորև բերված աղյուսակում և մասնակցության վերաբերյալ գրառումները ներկայացված են Հավելված 4.1-ում: Մասնակցությունը հանրային լուսմներին բարձր էր, քանի որ 85 ԱԵՏՏ-ները ներկայացնում էին 112 ԱԵԱ-ներ:
- 91) Հանդիպումների ընթացքում ներկայացվել են տարաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, այդ թվում՝ իրավունքների սխեման, փոխհատուցման մեխանիզմները, գնահատման մեթոդաբանությունը, չափագրման հետազոտությունը, ինչպես նաև ԱԵԱ-ների հետ քննարկված տարաբնույթ հատուկ դեպքերը: Բացի այդ, բոլոր ներկա ԱԵԱ-ներին յուրաքանչյուր հողամասի և դրա գույքի համար քարտեզ է ցուցադրվել՝ նշված հողակտորներով, շենքերով և կառույցներով, որոնք պարունակում էին ԱԵԱ-ների անունները: Ընդհանուր առմամբ, մասնակցած ԱԵԱ-ները գոհ էին հանրային լուսմների գործընթացից: Քննարկված հիմնական հարցերը և պատասխանները, ինչպես նաև առանցքային խնդիրները և մտահոգությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 4-1 Հարցեր և պատասխաններ

Հարցեր	Պատասխաններ
Պայմանագիրը ստորագրելուց հետո, ո՞րն է հաջորդ քայլը: Կողմերը պարզապես հանել գույքն ու հեռանա՞լ: Մարդիկ նաև ցանկանում են իմանալ, թե կարո՞ղ են արդյոք վերցնել տան շինարարության վրա օգտագործված նյութերից, թե՞ ոչ:	Վերջնական պայմանագիրը ստորագրելուց և փոխհատուցումը ստանալուց հետո կտրվի 30 օր՝ տեղափոխության համար: Ինչ վերաբերում է շինարարական նյութերին, նրանք կարող են վերցնել ինչ ցանկանում են, ինչպես օրինակ՝ դռները, պատուհանները և այլն, Ծրագրի իրականացման գրասենյակի ներկայացուցչի ներկայությամբ հանձնման ակտը ստորագրելուց հետո: Պահանջվում է՝ չկտրել ծառերը, քանի որ կապալառուն կարող է պահպանել դրանք կամ վերատնկել մեկ այլ վայրում:
Եթե ազդեցության ենթակա տարածքում առկա է խանութ, ի՞նչ կպատահի վերջինիս հետ:	Մշտական կորստի դեպքում դուք կստանաք դրամական փոխհատուցում մեկ տարվա համար՝ վճարված հարկերի համամասնությամբ: Կառույցը կփոխհատուցվի առանձին: Եթե առկա է գույք, որը պետք է տեղափոխել, ապա տեղափոխության ծախսերը կփոխհատուցվեն: Եթե դուք ունեք գրանցված աշխատողներ, ապա նրանք կստանան աշխատավարձ 6 ամսվա համար:
Պայմանագիրը ստորագրելուց հետո, նրանք ե՞րբ կստանան իրենց փոխհատուցումները: Կարծում եք, որ 30 օրը բավական է տեղափոխության համար: Հնարավո՞ր է պայմանագիրը ստորագրել փոխհատուցումը ստանալուց հետո: Կա՞ որևէ երաշխիք, որ փոխհատուցումները կտրվեն պայմանագիրը ստորագրելուց հետո:	Վերջնական պայմանագրից առաջ կտրվի պայմանագրի նախնական տարբերակը: Այնուհետև մեկ ամսից կամ 45 օրից պայմանագիրը կստորագրվի: Պայմանագիրը ստորագրելուց հետո 15 օրվա ընթացքում փոխհատուցման գումարը կփոխանցվի բանկային հաշվին: Տեղափոխության համար կտրվի մեկ ամիս գումարը բանկային հաշվին փոխանցելուց հետո:
Ե՞րբ է նախատեսվում տների քանդումը:	Պլանավորված է մեկնարկել շինարարական աշխատանքները Նոր Շիրակի փողոցի հատվածում մարտից մինչև մայիս ընկած ժամանակահատվածում:

<p>Ձեռնարկատիրական գործունեության դեպքում կհարկվի՝ արդյոք փոխհատուցման գումարը: Մարդկանց կարծիքով մեկ ամիսն ամենին էլ բավարար չէ տեղափոխության համար, հատկապես՝ արդյունաբերական ձեռնարկությունների համար:</p>	<p>Ազդեցության ենթակա անիձինք չեն վճարում գործառնական հարկեր կամ վճարներ կամ գրանցման վճարներ, եթե այդպիսիք կան: Այդ գումարները կամ ներառված են փոխհատուցման գումարի մեջ և ազդեցության ենթակա անձը պարտավոր է վճարել փոխհատուցման գումարից, կամ ծրագիրը կկատարի այդ վճարումները ազդեցության ենթակա անձանց համար:</p> <p>Ինչ վերաբերում է ամսաթվերին, հարկ է նշել, որ համաձայն Հայաստանում իրականացված տարաբնակեցման փորձի, տեղափոխության համար առավելագույնը տրվել է 15 օր: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ընթացակարգի բարդությունը, ԾԻԳ-ը երկարաձգեց ժամկետները, որոնք սկսվում են գումարը ստանալու օրից, այլ ոչ թե ստորագրման օրից: Այնուամենայնիվ, մասնակիցները տեղեկացվեցին բողոքարկելու իրենց իրավունքի և դրա գրանցման ընթացակարգի վերաբերյալ: Նրանց ասվել է, որ իրենց դժգոհությունները կքննարկվեն ԾԻԳ-ի և ԵԶ-ի հետ: ԱԵԱ-ները կտեղեկացվեն քննարկումներից բխած ցանկացած փոփոխության վերաբերյալ:</p>
<p>Ծրագիրը վերջնական է: Ի՞նչ կպատահի կառույցների հետ, որոնք չափազանց մոտ են գտնվում կառուցվող ճանապարհին: Ինչպես պետք է կառավարել թրթռումների, աղմուկի և փոշու առաջացրած հետևանքները:</p>	<p>Այո, Ծրագիրը վերջնական է: Կան տարբեր մոտեցումներ թրթռումների, աղմուկի և փոշու առաջացրած հետևանքները կառավարելու համար, որոնք կիրականացվեն միջազգային կապալառուի կողմից և մոնիտորինգի կենթարկվեն Մոնիտորինգի գործակալության կողմից:</p> <p>Ներկայումս մեր կողմից իրականացվում է թրթռումների և աղմուկի հետազոտություն՝ բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով:</p>
<p>Որո՞նք են հողի գնահատման չափանիշները:</p>	<p>Հողերի գնահատումը հիմնված է մոտեցումների վրա, որոնք համահունչ են ՀՀ օրենսդրությանը և Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակին: Հողերի դեպքում կկիրառվի համեմատության մեթոդը: Նշում. համաձայն ՀՀ օրենսդրության՝ կառույցները չեն ազատվում ամորտիզացիոն մասհանումներից, մինչդեռ, համաձայն սույն Ծրագրի, դրանք ամորտիզացիոն մասհանումների չեն ենթարկվում:</p>
<p>Ե՞րբ է հնավոր քանդել և հեռացնել շինությունները:</p>	<p>Շինությունները հնարավոր է քանդել և տանել միայն Ծրագրի իրականացման գրասենյակի ներկայացուցչի հետ հանձնման ակտը ստորագրելուց հետո:</p>
<p>Եթե սեփականության վկայականը միայն տան համար է, սակայն նկուղը սեփականացված չէ, ինչպես է իրականացվում փոխհատուցումը:</p>	<p>Քանի որ նկուղը գտնվում է բնակելի շինության տակ, փոխհատուցումը կկազմի 115%:</p>

4.3 Տեղեկատվության հրապարակումը

92) Մարդահամարի և USZ-ի ընթացքում հայերեն լեզվով տպագիր «Իրավունքների սխեման» բաժանվել է բոլոր ԱԵԱ-ներին: Հանրային լուսման ընթացքում ԾԻԳ-ը հայերեն լեզվով բրոշյուրներ է բաժանել, որոնց օրինակները ներկայացված են հավելվածներ 7-ում և 8-ում:

ա. Գնահատման մեթոդաբանության բրոշյուր, որը ներառել է հողատարածքի և կառույցների (ըստ տեսակի) միջին սակագները:

բ. Ծրագրի մասին տեղեկատվության նորացված բրոշյուր՝ իրավունքների սխեմայով, որտեղ ներկայացվել են Ծրագրի նկարագրությունը, բողոքների լուծման մեխանիզմը, իրավունքներն ու փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները:

93) Ծրագրի պլանավորման, իրականացման և մոնիտորինգի ընթացքում նախատեսվել են հանրային իրազեկման հետևյալ գործողությունները.

ա. ազդեցության ենթակա տարածքում բողոքների արագ արձագանքման և արդյունավետ լուծման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման նպատակով ստեղծել տարածքային գրասենյակ, որտեղ ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը կաշխատի սահմանված օրերին:

բ. ստեղծել և հրապարակել հատուկ էլեկտրոնային փոստի հասցե՝ ուղղված ԱԵԱ-ի հետ արդյունավետ հաղորդակցության խթանմանը;

գ. հրապարակել ԾԻԳ-ի հասցեն (ԱԵԱ-ների հետ անմիջական հանդիպումների համար) և ԾԻԳ-ի կոնտակտային հեռախոսահամարները;

դ. ԱԶԲ տարաբնակեցման կայքէջում տեղադրել ՀՕՏՕ-ի անգլերեն տարբերակը;

ե. ՀՕՏՕ-ի հայերեն օրինակները տարածել Շենգավիթի տեղական համայնքային իշխանությունների գրասենյակներում;

զ. Մշակել ԾԻԳ-ի ինտերնետային կայքէջ՝ ՀՕՏՕ-ի և վերջինիս հետ առնչվող բոլոր փաստաթղթերի հրապարակման համար, և

է. ՀՀ կառավարության կողմից ՀՕՏՕ-ի հաստատումից անմիջապես հետո բոլոր ԱԵԱ-ներին ծրագրի մասին վերջնական տեղեկատվական բրոշյուր ուղարկել, որը կներկայացնի ազդեցությունների ամփոփագիրը, իրականացման միջոցառումները, ինչպես նաև ՀՕՏՕ-ի փոխհատուցման քաղաքականությունը, (Հավելված 1):

5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

5.1 Ընդհանուր տեղեկություններ

94) ՀՕՏՕ 3-ն իր շրջանակում ներառում է արձագանքող, դյուրամատչելի և մշակույթին հարիր բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմի հիմնում, որը կկարողանա ստանալ ազդեցության ենթակա անձանց մտահոգություններն ու դժգոհությունները՝ Ծրագրի ֆիզիկական, սոցիալական և տնտեսական ազդեցությունների վերաբերյալ և դրանց տալ լուծումներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի վրա ազդեցություններին: ԱԵԱ-ն հնարավորություն կունենա բողոքարկել կամ հարցում կատարել ՀՕՏ ցանկացած ասպեկտի վերաբերյալ: Սահմանված բողոքարկման մեխանիզմի ներքո ԱԵԱ-ները կարող են բողոքարկել ցանկացած որոշում, գործելակերպ կամ գործողություն՝ կապված չափազրման, հողի կամ այլ ակտիվների գնահատման, դրանց օտարման և փոխհատուցման հետ: Բոլոր հնարավոր ուղիները հասանելի կլինեն ԱԵԱ-ների համար՝ ներկայացնելու իրենց դժգոհությունները: ԾԻԳ-ը կապահովի, որ հողի օտարման, փոխհատուցման և տարաբնակեցման վերաբերյալ ցանկացած հարց, բողոք և դժգոհություն, ստանա ժամանակին և արդյունավետ լուծում:

95) Բողոքների լուծման մեխանիզմի առանցքային խնդիրներն են՝

ա. Ձեռք բերել փոխհամաձայնեցված լուծումներ, որոնք երկուստեք կբավարարեն թե՛ Ծրագրին և թե՛ ԱԵԱ-ներին, ինչպես նաև տեղում լուծել տարաբնակեցման հետ կապված որևէ դժգոհություն՝ խորհրդակցելով տուժած կողմի հետ:

բ. Նպաստել ՀՕՏՕ-ների սահուն իրականացմանը, մասնավորապես՝ կրճատել երկարատև դատական գործընթացները և կանխել Ծրագրի իրականացման ձգձգումները:

գ. Ժողովրդավարացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում՝ միաժամանակ ապահովելով թափանցիկություն և ազդեցության ենթակա անձանց հանդեպ սահմանելով պատասխանատվություն:

96) Բոլոր ԱԵԱ-ները լիարժեք տեղեկացվել են իրենց իրավունքների և բողոքների հասցեագրման ընթացակարգերի մասին հանրային լուսման ընթացքում, նախքան մանրամասն չափազրումները, ԱԵԱ-ների՝ օտարման ենթակա սեփականության և օգտագործվող գույքի գույքագրումը, հաշվառումը և գնահատումը: Մա նույնպես ապահովվեց ՀՕՏՕ 3-ի իրականացումը մանրակրկիտ մշակելու միջոցով՝ ապահովելով բոլոր ԱԵԱ-ների լիարժեք մասնակցությունը և խորհրդակցությունները, ինչպես նաև ընդհանուր առմամբ ստեղծելով լայնածավալ հաղորդակցություն և համակարգում ԱԵԱ-ների, ԾԻԳ-ի և տեղական իշխանությունների միջև:

5.2 Բողոքների լուծման ընթացակարգը

97) Բողոքների և դժգոհությունների լուծումը ժամանակին, թափանցիկ և բավարար կերպով ապահովելու, ինչպես նաև ԱԵԱ-ների համար իրենց դժգոհություններն արտահայտելու բոլոր հնարավոր ուղիներն ապահովելու նպատակով սահմանվեց բողոքների լուծման մեխանիզմը,

որտեղ ընդգրկվեցին մի շարք կողմեր, ինչպես օրինակ՝ ԵՔ-ն, ԾԻԳ-ը և ԾԿԽ-ն: Ջանքեր կգործադրվեն տեղական մակարդակով լուծել ներկայացված բողոքները: Այնուամենայնիվ, տարաբնակեցման փուլում ստացված բողոքներն ու դժգոհությունները կլուծվեն հետևյալ քայլերի և գործողությունների միջոցով:

Քայլ 1

- 98) ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը (SU) կընդունի բողոքը: Բողոքը կստորագրվի ԱԵԱ-ի կողմից, և այն կներառի հետևյալ տվյալները՝ 1) բողոքի բնույթը, 2) օտարվող սեփականության կամ օգտագործվող գույքի գտնվելու վայրը և 3) դիմումատուի հասցեն (հաշվառման կամ բնակության վայրի): Եթե SU-ն չկարողանա լուծել խնդիրը, կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ վերաբնակեցման առաջարկով, ապա գործը կուղարկվի ԾԻԳ-ի այլ մասնագետներին՝ վերանայման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավոր այլ լուծումների տրման համար:
- 99) ԾԻԳ-ը կիրառարակի պաշտոնական պատասխան դաշտային SU-ի կողմից բողոքը ստանալուց ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: Այս պատասխանը կենթադրի կամ դիմողին փոխհատուցման առաջարկ, կամ խնդրի հետագա քննարկում առանձին հանդիպման ընթացքում, կամ էլ՝ բողոքը մերժելու վերաբերյալ բացատրություն: Եթե բողոքը չի կարող լուծվել այս մակարդակում, կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ լուծումով, ապա բողոքը կներկայացվի ԵՔ-ին:


Քայլ 2

- 100) Եթե ԱԵԱ-ն համաձայն չէ ԾԻԳ-ի փոխհատուցման առաջարկի կամ բողոքի մերժման պատճառների հետ, ապա նա պետք է բողոք ներկայացնի ԵՔ-ին: ԱԵԱ-ն բողոքը պետք է ներկայացնի ԾԻԳ-ից պատասխանը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Բողոքը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն այս փուլում: ԵՔ-ն պետք է արձագանքի բողոքին 15 օրվա ընթացքում: Եթե որևէ վճիռ չի կայացվել, ԵՔ-ն պետք է գործը փոխանցի ԾԿԽ՝ վերջինիս որոշումը ստանալու համար: ԾԿԽ-ն կքննարկի բողոքը նիստում: ԾԿԽ որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏԾ-ով սահմանված դրույթներին:

Քայլ 3

- 101) Եթե դիմողը բավարարված չէ ԾԿԽ-ի կայացրած որոշումով, և անձը մտադիր է շարունակել գործընթացը, ապա նա կարող է հանձնել գործը համապատասխան դատարան, որի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, կլինի վերջնական:
- 102) Այնուհանդերձ, դժգոհությունների վերոնշյալ մեխանիզմը և գործընթացները չեն սահմանափակում քաղաքացու՝ գործը համապատասխան դատարան ներկայացնելու իրավունքը, բողոքի քննարկման ցանկացած փուլում: Բոլոր ջանքերը կգործադրվեն ԾԻԳ-ի մակարդակում խնդիրները կարգավորելու համար՝ խորհրդակցելով համայնքների հետ: Եթե հնարավոր չէ, ապա պետք է փորձել խնդիրը լուծել ԵՔ/ԾԿԽ մակարդակում՝ հնարավորինս խուսափելով/կանխելով ձգձգումները: Բոլոր բողոքներն ու լուծումները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն ԾԻԳ-ի կողմից և հասանելի կլինեն դիտարկումների, մոնիտորինգի և գնահատման նպատակներով:
- 103) Բոլոր ստացված և դիտարկված բողոքները կփաստաթղթավորվեն՝ անկախ արդյունքներից:

Նկար 5-1 Բողոքների լուծման գործընթացի սխեմայի պատկերումը



5.3 Տեղեկատվության և բողոքների լուծման գործընթացի մատչելիությունը

104) Ազդեցության ենթակա համայնքների համար թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու նպատակով, ինչպես նաև ապահովելով տեղեկատվության, աջակցության և բողոքների լուծման ծառայությունների մատչելիությունը ԱԵԱ-ների համար, ԾԻԳ-ը նախատեսել է նաև հետևյալ լրացուցիչ միջոցները:

ԾԻԳ-ի դաշտային գրասենյակը

105) ԱԵԱ-ների համար առավել մատչելիություն ապահովելու նպատակով ՀՕՏՕ մշակման փուլում ԾԻԳ-ի կողմից հիմնվեց դաշտային գրասենյակ տեղի դպրոցներից մեկում: Հանրային լուսմների ժամանակ ԱԵԱ-ները տեղեկացվեցին դաշտային գրասենյակի վերաբերյալ: ՀՕՏՕ-ի մշակման պահից սկսած՝ ԱԵԱ-ների հետ կազմակերպվեցին շաբաթական հանդիպումներ:

ԾԻԳ-ի կայքէջը

106) ԾԻԳ-ը ստեղծել է Ծրագրի ինտերնետային կայքէջը՝ 2013 թվականի սեպտեմբերին: Ծրագրին առնչվող փաստաթղթերը հասանելի են կայքէջում և կանոնավոր կերպով կթարմացվեն: Շահառուները և համայնքային լայն հասարակության անդամները կկարողանան տեղադրել հարցեր, կարծիքներ և առաջարկություններ, ստանալ իրենց հարցերի պատասխանները և ձեռք բերել Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ:

Հատուկ էլեկտրոնային փոստ

107) Լայն հասարակության և ԱԵԱ-ների համար, ովքեր գերադասում են էլեկտրոնային հաղորդակցությունը, Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի դարձնելու նպատակով ԾԻԳ-ը ստեղծեց հատուկ նախատեսված էլեկտրոնային փոստի հասցե, որպեսզի լայն հասարակությունն ուղարկի իր դժգոհությունները, առաջարկությունները/կարծիքը/հարցերը և այլն (verabnaketsum@yerevan.am): Էլեկտրոնային փոստի հասցեն Ծրագրի ընթացքում կմնա ակտիվ վիճակում, ներառյալ՝ Թերությունների

մասին ծանուցման ժամանակահատվածում: Էլեկտրոնային փոստի հասցեի տվյալներն ԱԵԱ-ներին տրվել են հանրային լսումների ընթացքում տեղական իշխանությունների կողմից Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և տեղեկատվության տարածման այլ հասանելի միջոցներով: Հաշիվն արդեն գործում է:

Դեմ առ դեմ հանդիպումներ

108) Եթե ԱԵԱ-ները չկարողանան օգտագործել հասանելի ուղիներից որևէ մեկը, ապա նախատեսված են դեմ առ դեմ հանդիպումներ ԾԻԳ-ի համապատասխան մասնագետի հետ: Դեմ առ դեմ հանդիպում նշանակելու նպատակով ԱԵԱ-ների համար հասանելի են հետևյալ կոնտակտային տվյալները՝

ԾԻԳ-ի հեռախոսահամարը՝ 010-52-09-73
Հասցեն՝ Փ. Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 0010 Երևան,
Հայաստանի Հանրապետություն:

Փոստային բողոքներ

109) ԱԵԱ-ները, շահառուները և լայն հասարակությունը հնարավորություն կունենան ուղարկել նամակներ՝ իրենց դժգոհություններով, մտահոգություններով, կարծիքներով և առաջարկություններով՝ ԾԻԳ-ի հետևյալ հասցեով՝

«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ
Փ. Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն:

110) Հասանելի ուղիների վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի ազդեցության ենթակա անձանց հանրային լսումների ընթացքում: Եթե հանրային լսումների ընթացքում ԱԵԱ-ներն առաջարկեն իրենց կարծիքն ու մտահոգությունները լսելի դարձնելու առավել արդյունավետ միջոցներ, ապա նրանց առաջարկությունները կընդգրկվեն բողոքների լուծման մեխանիզմում՝ համապատասխանաբար տեղեկացնելով հանրությանը:

6. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունը

6.1.1 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

- 111) ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը: Համաձայն վերջինիս՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման դեպքերը նախատեսվում են ՀՀ հողային օրենսգրքի 102, 104 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (1998 թ.), 2006 թվ. նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:
- 112) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարվում է միայն կառավարության կողմից օտարման նպատակը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու դեպքում: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ նշվում են
- ա. այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը,
 - բ. օտարվող սեփականության ձեռքբերողը,
 - գ. օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից,
 - դ. սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը:
- 113) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են հողի օտարման ընթացակարգերը և հողամասի և անշարժ գույքի սեփականատերերի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմնի կողմից պետք է կազմվի արձանագրություն, որտեղ կնկարագրվի օտարվող սեփականությունը՝ կառավարության կողմից սահմանված ընթացակարգերի և վերջնաժամկետների համաձայն, ձեռքբերող կողմը. սեփականատերերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները կարող են մասնակցել արձանագրության կազմմանը, եթե վերջինս արդեն չի կազմվել սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում այն բողոքարկել լիազոր մարմնին և/կամ դատարանում:

- 114) Հողամասի/սեփականության օտարումն իրականացվում է ԵՔ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց օրինական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով վերջինիս շուկայական արժեքը և կորուստները, այդ թվում՝ նաև դրանից բխող հետևանքային վնասները և կարող է ներառել հողամասի/սեփականության փոխարինումը: Իր գույքի օտարման դիմաց սեփականատիրոջը կվճարվի համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:
- 115) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գնահատումը պետք է իրականացվի՝ 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման մասին ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն:

6.1.2 Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները

- 116) Հարկադիր տարաբնակեցման ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

ա. խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:

բ. Փոխհատուցման/վերականգնման վերաբերյալ դրույթները կապահովեն ԱԵԱ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:

գ. ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված լինեն, և նրանց պետք է խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ փոխհատուցման տարբերակների վերաբերյալ:

դ. Հարկ է հնարավորինս օժանդակել/աջակցել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային ինտեգրմանը:

ե. Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարության դիտարկմամբ:

զ. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:

է. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց կենսամակարդակը բարելավելու համար:

ը. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես Ծրագրի մի մաս, իսկ փոխհատուցման ողջ արժեքը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի մեջ:

թ. փոխհատուցումը ու տարաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի շինարարական աշխատանքների մեկնարկը:

6.1.3 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը

- 117) ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունն ու տարբերությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 6-1 Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Քաղաքականության և ԱԶԲ Քաղաքականության համեմատություն

ՀՀ օրենսդրություն	ԱԶԲ ԱՔՀ
Հողի փոխհատուցում, միայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ունեցող սեփականատերերին:	Սեփականության վկայականի բացակայությունը խոչընդոտ չէ փոխհատուցման և/կամ վերականգնման համար: Առանց վկայականի անշարժ գույքի օգտագործողները նույնպես ստանում են վերականգնման նպաստ:
Բոլոր տները/շինությունները փոխհատուցվում են Ծրագրի շրջանակներում վնասված/քանդված շինությունների համար բացառությամբ չգրանցված առևտրային շինությունների:	ԱԶԲ քաղաքականությունը ներառում է փոխհատուցում նաև չգրանցված առևտրային շինությունների համար:
Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է միայն ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ հողամասը տնօրինող սեփականատերերին:	Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ-ներին:
Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական արժեք + գնահատված արժեքի 15%:	Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական գնի/փոխարինման արժեքի վրա:
Նախքան գնահատումը հարկ է ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին ներկայացնել ազդեցությունների քանակի և արժեքի, փոխհատուցման գումարների և ֆինանսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվություն:	Նույնն է:
Ոչ մի դրույթ չկա զգալի ազդեցություն կրած ԱԵԱ-ների և խոցելի խմբերի եկամտի/ապրուստի վերականգնման միջոցառումների, նպաստների կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ:	ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ապրուստի վերականգնում, լուրջ կորուստների, ինչպես նաև վերաբնակեցման գործընթացի շրջանակներում ԱԵԱ-ների կողմից կրած ծախսերի համար:

118) Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունն ու ԱԶԲ քաղաքականությունը ՀՕՏ-ի վերաբերյալ սկզբունքորեն չեն տարբերվում: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքները և կանոնակարգերը այնքան էլ հստակ չեն սահմանում, թե ԱԵԱ-ների վերականգնումն ինչ ճանապարհով պետք է իրականացվի: Մեկ այլ խնդիր է, որ ԱԶԲ-ն փոխհատուցման կամ նվազագույնը վերականգնման համար իրավասու է ճանաչում անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական ունեցող կամ առանց վկայականի սեփականատերերին կամ գրանցված և չգրանցված օգտագործողներին: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության միջև այս անհամապատասխանությունները համաձայնեցնելու նպատակով ԵԲ-ն Ծրագրի համար պատրաստեց ՀՕՏ նախագիծը, որն ապահովում է փոխհատուցում փոխարինման ողջ արժեքով, բոլոր տարրերի համար և նվազագույնը փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների չպահպանմամբ/առանց սեփականության վկայականի բնակվողների և ձեռնարկատիրական գործունեության համար: ՀՕՏ-ն նախատեսում է նաև վերականգնողական փաթեթներ՝ և՛ խոցելի և զգալի ազդեցության ենթակա ԱԵԱ-ների համար, որոնք պետք է վերաբնակեցվեն:

119) Առաջին հերթին պետք է փորձել սեփականության իրավունքով տնօրինվող անշարժ գույքը օտարել ազդեցության ենթակա անձանց/միավորների հետ առանձին բանակցությունների հիման վրա: Բանակցությունների ձախողման դեպքում կգործի հանրային գերակա շահի օրենքը և կնախաձեռնվի հարկադիր օտարման վարույթ: Բանակցության հիման վրա վաճառքի դեպքում, ԱԶԲ-ն պահանջում է հավուր պատշաճի ապահովել, որ ԱԵԱ-ներին առաջարկվի արդար գին, տեղեկատվություն և սակարկելու բավարար սահման, ինչպես նաև, որպեսզի նրանց դեպքը մոնիտորինգի ենթարկվի արտաքին անկախ գործակալության կողմից: Այս պայմանները լիովին երաշխավորվում են արտաքին անկախ գործակալության և, ՀՀ

կառավարության փորձի համաձայն, գույքի փոխհատուցման դրույքաչափերը սահմանելու համար՝ հողի անկախ գնահատողի ներգրավմամբ:

6.1.4 Սույն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները

120) ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության (ՄԱՔ) հայտարարագրի (2009 թվ.) հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները.

ա. Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:

բ. Անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սեղմ ժամկետներով նոր ՀՕՏՕ (ինչպես սույն ՀՕՏՕ-ն), և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ առնվազն պահպանելու նախքան Ծրագրի իրականացումը վերջիններիս ունեցած կենսամակարդակը:

գ. Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդատվությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը և ենթածրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև անկախ մոնիտորինգային գործակալության կողմից իրականացվող մոնիտորինգին մասնակցելու միջոցով:

դ. Խոցելի և զգալի ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:

ե. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական չունեցող ԱԵԱ-ները (օր.՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողից բացի այլ կորուստների դիմաց:

զ. ԱԵԱ-ների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները կգրանցվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կփոխհատուցվեն հողի կորուստների դիմաց:

է. Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:

ը. ՀՕՏՕ-ն կտրամադրվի կամ հասանելի կլինի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով, Ծրագրի կայքէջի միջոցով:

թ. Փոխհատուցման, վերաբնակեցման նպատակով օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան ցանկացած շինարարական աշխատանքների որոշակի փաթեթի իրականացումը:

ժ. Մշակված է ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմ:

6.2 Փոխհատուցում ստանալու իրավունքը

121) Ծրագրի ներքո փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝

ա. հողամասը կորցնող բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ունեն կամ չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական,

բ. Անշարժ գույքի նկատմամբ իավունքների գրանցման անկայությամբ կամ բացակայությամբ՝ այդ գույքը փաստացի տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ները,

գ. շինությունների, բերքի, մշակաբույսերի կամ հողամասին ամրագրված այլ օբյեկտների սեփականատերերը, և

դ. ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ները:

122) Փոխհատուցման իրավունքը սահմանափակված է կասեցման օրով՝ 2012 թվականի ապրիլի 13-ը, որը ԱԵԱ-ների մարդահամարի և ՄՉՀ (նկարագրության արձանագրությունների պատրաստում) սկիզբ է հանդիսանում: ԱԵԱ-ները, ովքեր կհաստատվեն ազդեցության ենթակա տարածքներում կասեցման օրից հետո, փոխհատուցման իրավասություն չեն ունենա: Այնուամենայնիվ, նրանց կանխավ կներկայացվի համապատասխան ծանուցում, որով վերջիններիս կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները՝ նախքան Ծրագրի իրականացումը սկսելը: Նրանց ապամոնտաժված կառույցներն ու նյութերը չեն առգրավվի, նրանք տուգանքներ չեն վճարի կամ սանկցիայի չեն ենթարկվի:

6.3 Փոխհատուցում ստանալու իրավունքները

123) Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխհատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի՝ ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱԶԲ քաղաքականությանը համապատասխան: Իրավունքների ամփոփ սխեման ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6-2 Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի վերջնական կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է), կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	ԱԵԱ հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:

		<p>Վարձակալ (համայնքային, պետական)</p>	<p>Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի «շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող</p>	<p>Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:</p>
<p>2. Ոչ գյուղատնտեսական հողեր</p>	<p>ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց աստիճանային նշանակության կամ բնակելի հողերը</p>	<p>Սեփականատեր</p>	<p>Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող</p>	<p>Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:</p>
		<p>Վարձակալ (համայնքային, պետական)</p>	<p>Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի «շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) >25տարի՝ հողի արժեքի 25%</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող</p>	<p>Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:</p>
<p>3. Բնակելի կառույցներ</p>		<p>Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ սեփականության իրավական գրանցման կարգավիճակից</p>	<p>Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքը +15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:</p>
	<p>Վերաբնակեցվող վարձակալ</p>	<p>Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:</p>	

4. Ոչ բնակելի կառույցներ/գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքը +15%: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխ-հատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ	Փոխհատուցումը կիրականացվի վերոհիշյալ սկզբունքով, կառույցի օրինականացման/գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցության կրելու նպատակով՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում
5. Ընդհանուր սեփականության միջոցներ	Համայնքային/ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքի/պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած կառույցների վերակառուցում և նրանց գործառնությունների վերականգնում:
6. Բերք	Ազդակիր Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
7. Ծառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Շուկայական գներով հաշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
8. Ձեռնարկատիրություն/ Գործարարություն	Ձեռնարկատերեր/գործարարներ	Բոլոր ԱԵՄ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	<p>Ձեռնարկատեր/անհատ ձեռնարկատեր</p> <p>ա) (մշտական ազդեցության դեպքում) միանվագ փոխհատուցում տարեկան գուտ եկամտի չափով, բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) գուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ/աշխատակիցներ.</p>

			ա) (մշտական ազդեցության դեպքում) վեց ամսվա կորցրած նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում, բ) (ժամանակավոր ազդեցության դեպքում) մինչև վեց ամիս նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:
9. Ծանոթա-կություն էական ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսի կորուստ կամ վերաբնակեցում	Էականորեն ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ տարվա բերքի չափով միանվագ փոխհատուցում: 2) 6 ամսվա վերաբնակեցման նպաստ վերաբնակեցման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:
10. Ծանոթա-կություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
11. Ծանոթա-կություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ) տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերա-կանգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդիդատներն աջակցություն կստանան նաև կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

124) ԱԵԱ-ների իրավունքների վերաբերյալ դրույթները ներառում են հողամասի, շինության, մշակաբույսերի և ծառերի կորստի և հարկային հայտարարագրի հիման վրա և/կամ միանվագ վճարման տեսքով ձեռնարկատիրական գործունեության կորստի դիմաց, ինչպես նաև զգալի ազդեցության, վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին դրույթներ: Այս իրավունքները մանրամասն ներկայացված են ստորև:

ա. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վրա ազդեցության դեպքում կտրվի դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն: Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը, ապա ԱԵԱ-ն (սեփականատերերը, վարձակալները և բնավարձակալները) պետք է զգալի ազդեցության համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողամասից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:

բ. Այն ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները **ենթակա չեն գրանցման**, պետք է միանվագ վերաբնակեցման նպաստի տեսքով դրամական փոխհատուցում ստանան, որը կհաշվարկվի՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ը:

գ. ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները **ենթակա են գրանցման** (եթե այդպիսիք կան), օրինական կարգավիճակ կստանան և կփոխհատուցվեն որպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերեր:

դ. Վարձակալները կստանան դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպով՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%-ը:

ե. Բնակելի շենքերի/շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին փոխարինման արժեքով (շուկայական արժեքից ոչ ցածր) + 15% օժանդակություն՝ անկախ տան գրանցման կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի և այլն: Մասնակիորեն ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, երբ սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք վերականգնումը շահագործման համար պիտանիության նախկին վիճակին: Վերաբնակեցված սեփականատերերին կտրվի վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ (տե՛ս ստորև):

զ. Ոչ բնակելի շենքերի/շինությունների համար փոխհատուցումը կտրամադրվի հետևյալ կերպ.

1. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵՏՏ-ներ՝ շենքերի/շինությունների կորստի դիմաց դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով + 15% օժանդակություն (շուկայական արժեքից ոչ ցածր) առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքի համար ծախսերի, փրկված նյութերի և այլն:
2. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝ ինչպես վերոնշյալ դեպքում, սակայն առանց 15% օժանդակության:
3. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝ փոխարինման արժեքին համարժեք վերականգնման օժանդակություն (առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի)՝ հանած օրինականացման ծախսերի արժեքը՝ առավելագույնը մինչև շուկայական արժեքի 20%: Անհրաժեշտություն չկա օրինականացնել այս շենքերը/շինությունները: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվեն վերաբնակեցման և զգալի ազդեցության բոլոր նպաստները (տե՛ս ստորև):

է. Մշակաբույսեր. Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական գնի դրամական փոխհատուցում: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը պետք է կատարվի և՛ սեփականատերերին, և՛ վարձակալներին՝ իրենց առանձնահատուկ վարձակալության պայմանագրերի հիման վրա:

ը. Ծառեր. Շուկայական դրույքաչափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

թ. Ձեռնարկատիրական գործունեություն. Մշտական կորուստների (1 տարի կամ ավել) դիմաց կտրվի դրամական փոխհատուցում 1 տարվա գուտ եկամտի չափով՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ժամանակավոր կորուստների դիմաց կտրվի դրամական փոխհատուցում ամսական եկամտին համարժեք՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ըստ ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակի: Հարկային հայտարարագրի բացակայության դեպքում այս ԱԵԱ-ները կփոխհատուցվեն վերոնշյալ կարգով, սակայն հիմք ընդունելով առավելագույն չհարկվող աշխատավարձը՝ 45,000 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձը):

ժ. Մշտապես գործող ձեռնարկատիրական գործունեության աշխատողները և աշխատակիցները կստանան փոխհատուցում իրենց վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց, յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքի ժամանակավոր կորուստ. փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության դադարեցված ժամանակահատվածում կորցրած աշխատավարձի դիմաց՝ առավելագույնը մինչև 6 ամիս:

ի. Վերաբնակեցման նպաստ. ԱԵԱ-ները, որոնք պետք է տարաբնակեցվեն (ներառյալ վարձակալները), 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (45,500 ՀՀ դրամ):

լ. Համայնքային կառուցվածքները պետք է ամբողջությամբ փոխարինվեն կամ վերականգնվեն՝ ապահովելով վերջիններիս՝ նախքան Ծրագիրն ունեցած գործառույթները:

խ. Օժանդակություն զգալի ազդեցությունների դեպքում. այս օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵՏՏ-ներին, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը (տե՛ս վերոնշյալ) կամ բնակելի շինություններից վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին (ներառյալ վարձակալները):

ծ. Օժանդակություն խոցելի անձանց. Խոցելի անձանց (ԱԵՏՏ-ները, որոնց կենսամակարդակը ցածր է աղքատության սահմանագծից, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների) կտրամադրվի վերականգնման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով և առաջնահերթություն՝ կապված Ծրագրի հետ առնչվող աշխատատեղերի հետ:

6.4 Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում

- 125) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գնահատումն իրականացվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Գույքի տարբեր տեսակների միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը ԱԶԲ-ն գնահատում է հետևյալ մեթոդաբանությամբ.

ա. Գյուղատնտեսական նշանակության հողը գնահատվում է շուկայական դրույքաչափերով՝ ազդեցությունների ուսումնասիրությանը նախորդող տարում անցկացված հողամասի վաճառքի ուսումնասիրության հիման վրա:

բ. Առանձնատները/շինությունները գնահատվել են՝ համաձայն շինարարության տեսակի, նյութերի, արժեքի, աշխատուժի, տրանսպորտի և շինարարական այլ ծախսերի փոխարինման դրույքաչափով: Փոխհատուցման գումարից ամորտիզացիայի/գործառնական ծախսերի նվազեցում չի կատարվել: Եթե ԱԵԱ-ն չի ցանկանա վերաբնակեցվել, ապա մասնակի ազդեցությունների դիմաց հնարավոր է վճարել բացառապես շինության վնասված մասնաբաժնի կամ վերջինիս վերանորոգման համար:

գ. Տարեկան մշակաբույսերը գնահատվել են՝ շուկայական գների համաձայն նախորդ տարվա բերքի մեծածախ առևտրի արժեքի դիմաց: Այն դեպքերում, երբ բերքի դիմաց ավելի քան 1 տարվա փոխհատուցում պետք է վճարվի ԱԵԱ-ներին, ապա դա պետք է փոխհատուցվի շուկայի համախառն արժեքով:

դ. Ծառերը գնահատվել են տարբեր մեթոդաբանությունների համաձայն՝ պայմանավորված նրանով, թե արոյոք այն պտղատու է, թե ծառայում է որպես փայտանյութ:

1. Փայտանյութ տվող ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. միջին տարիք և գ. մեծ ծառեր) և փայտի ծավալի արժեքի,

2. Մրգատու/բերքատու ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. մեծ, սակայն ոչ մրգատու, և գ. մրգատու). ա/ և բ/ կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն կատարված ներդրումների արժեքի հիման վրա, գ/ կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն 1 տարվա եկամտի զուտ շուկայական արժեք \times առավելագույն տարիների քանակը, որն անհրաժեշտ է ծառը լիարժեք բերքատվության տարիքին աճեցնելու համար:

126) Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը գնահատվել են հավատարմագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ԱԶԲ-ի համար ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության վրա: Գնահատված փոխհատուցման դրույքաչափերն այնուհետև ստուգվել և հաստատվել են ԾԻԳ-ի կողմից:

6.5 Հարկադիր օտարման պայմանները

127) Հողի օտարումը հարկադիր օտարման վարույթով ենթադրում է երկարատև գործընթաց և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Նման մոտեցումը, հետևաբար, Ծրագրի համար կնխաձեռնվի միայն ծայրահեղ դեպքերում, երբ բանակցություններն ԱԵԱ-ների և ԵՔ-ի միջև ձախողվում են, և չկա այլընտրանքային հողամաս՝ Տրանշի իրականացման համար: Նման դեպքերում, այնուամենայնիվ, ԵՔ-ն չի զբաղեցնի անհրաժեշտ հողամասերը, մինչև՝ 1) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական վարույթ չսկսվի, 2) ձեռք չբերվի դատարանի որոշումը և հավուր պատշաճի չհաղորդվի ԱԵԱ-ներին և 3) փոխհատուցման/վերականգնման գումարները չփոխանցվեն համապատասխան էսքրոու հաշվին:

6.6 Օրինականացման պայմանները և մեխանիզմը

128) Սկզբունքորեն անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բոլոր հողօգտագործողները կարող են օրինականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, քանի դեռ նրանք չեն զբաղեցնում այնպիսի տարածքներ, որոնք պաշտոնապես պահվում են հատուկ հանրային նպատակներով օգտագործման համար, ինչպես օրինակ՝ ռազմական, հիվանդանոցի, դպրոցի տարածքներ կամ տարածքներ, որոնք էկոլոգիապես համապատասխան չեն բնակության համար (գետի հուն, ռադիոակտիվ տարածք կամ այլ վտանգավոր կամ ոչ պիտանի հողեր): ՀՀ օրենսդրությունը սահմանում է օրինականացման ենթակա գույքի օրինականացման մանրամասն ընթացակարգը:

129) Այնուամենայնիվ, սույն Ծրագրի համար ընդունված մոտեցումը նախատեսում է օրինականացման ենթակա գույքի օրինականացման ավելի հեշտ ընթացակարգ, որին հետևում է արդարացի և համարժեք փոխհատուցումը՝ որպես օրինական գույքի դիմաց: ՀՀ

օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված են նախաձեռնել օրինականացման գործընթացը՝ համաձայն համապատասխան վարչական կանոնակարգերի: Երևանի քաղաքապետարանի մոտեցումն օրինականացման խնդրին հետևյալն է.

ա. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները կանցնեն օրինականացման գործընթաց, սակայն կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատերեր (փոխարինման արժեքի 115%):

բ. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով ոչ բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված չեն լինի անցնել օրինականացման գործընթաց: Փոխհատուցման գումարը կվճարվի փոխարինման արժեքով առանց օրինականացման ծախսերի:

գ. Ազդեցության ենթակա և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի դեպքում, որը ենթակա է գրանցման, ԱԵԱ-ները կօրինականացվեն և կվճարվեն որպես օրինական սեփականատերեր:

դ. Ազդեցության ենթակա հողամասի դեպքում, որը ենթակա չէ օրինականացման, ԱԵԱ-ներին կտրվի փոխհատուցում՝ տեղափոխության միանգամայն նպաստ, ազդեցության ենթակա հողամասի կադաստրային կամ շուկայական արժեքի (որն ավելի բարձր է) 25% -ի չափով:

- 130) Սույն ՀՕՏՄ 3-ի տարածքում կան մի շարք դեպքեր, որոնք ներառում են ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքի օրինականացման գործընթաց: 11 գույքեր գտնվում են օրինականացման գործընթացում

7. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԵԿԱՄՏԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄ

7.1 Ընդհանուր տեղեկություններ

- 131) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կենսապահովման միջոցների վերականգնման նկատառումով լրացուցիչ աջակցության միջոցների բացահայտման նպատակով` ԾԻԳ-ը և ՄՆՇՎԽ-ն ԱԵԱ-ների և համապատասխան տեղական իշխանությունների հետ իրականացրել են հանրային լսումներ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-տնտեսական հետազոտության համար տվյալներ հավաքագրելու ընթացքում ԱԵԱ-ներին նաև տրվեց հնարավորություն` գնահատելու կենսապահովման միջոցները վերականգնելու իրենց հնարավորություններն այն փոխհատուցումով, որն իրենք իրավասու են ստանալ` համաձայն ՀՕՏԾ-ի: Ավելին ԱԵԱ-ներին հնարավորություն է ընձեռվել առաջարկել լրացուցիչ միջոցառումներ, որոնք, իրենց կարծիքով, նվազագույնը կապահովեն նախքան Ծրագիրն ունեցած իրենց կենսամակարդակի վերականգնումը:
- 132) Ստորև բերված պարբերությունները նախանշում են հիմնական ազդեցությունները և հաշվի առնված հիմնական միջոցառումները` կենսապահովման միջոցների վերականգնման համար: Մարդահամարը բացահայտել է 86 ազդեցության ենթակա տնային տնտեսություն ՀՕՏԾ 3-ի տարածքում: ՀՕՏԾ 3 հատվածը հիմնականում ազդեցության կենթարկի

ա. 53 ԱԵՏՏ-ների, որոնք կվերաբնակեցվեն իրենց բնակավայրերից,

բ. 7 ձեռնարկատիրական գործունեություններ և

գ. 56 ԱԵՏՏ-ների գյուղատնտեսական եկամուտը:

7.2 Ազդեցության ենթակա գյուղատնտեսական եկամուտ

- 133) Կան 56 ԱԵՏՏ-ներ, որոնք ազդեցության ենթակա հողակտորներից կկորցնեն գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը: Քաղաքային վայրում հողակտորները փոքր են, և նույնիսկ աննշան կորուստը կարող է կազմել գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը և, որպես այդպիսին, արդյունքում հանգեցնել զգալի ազդեցության իրավունքի: Զգալի ազդեցության միջին նպաստը (ազդեցության ենթակա մասից ստացվող պոտենցիալ գյուղատնտեսական եկամուտը 12 ամսվա համար) կազմում է 398,173.75 ՀՀ դրամ նվազագույնը` 8,000, իսկ առավելագույնը` 2,500,000 ՀՀ դրամ: Միջին եկամուտն ավելի քիչ է, քան ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն աշխատավարձը (12*45.000 ՀՀ դրամ): Ազդեցության կենթարկվեն պտղատու այգիներով ընդամենը 15 հողակտորներ: Զգալի ազդեցության ենթակա մնացած հողատորները բնակելի են` մշակաբույսերով և ծառերով: Այնուամենայնիվ, պտղատու այգիներով այդ բոլոր 15 հողակտորները տվյալ ԱԵՏՏ-ների համար հիմնական եկամտի աղբյուր չեն հանդիսանում: Մարդահամարի հետազոտության տվյալներով ընդամենը 4 ԱԵՏՏ անդամներ են նշել գյուղատնտեսությունը որպես հիմնական զբաղվածություն, սակայն ոչ` ԱԵՏՏ-ների եկամտի միակ աղբյուր:

- 134) Այնուամենայնիվ, ԱԵԱ-ներն օգտագործում են ԵՔ-ին՝ սեփականության իրավունքով պատկանող հողերը՝ միրգ/փայտանյութ տվող/դեկորատիվ ծառեր աճեցնելու համար: Նշված փաստով պայմանավորված՝ այս ազդեցությունը դասակարգվում է որպես գյուղատնտեսական: Մակայն, պարզությունն ապահովելու նպատակով, հարկ է ընդգծել, որ «գյուղատնտեսական» եկամտի կորստի գաղափարը այս շրջանակում իր նշանակությամբ էապես տարբերվում է գյուղական միջավայրի գյուղատնտեսական եկամտի կորստից: Գյուղական համայնքներում ԱԵԱ-ներն ապրում են գյուղատնտեսությամբ, որը նրանց տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրն է: Ազդեցության ենթակա քաղաքային վայրերում գյուղատնտեսական եկամտուն առաջանում է փոքր հողակտորների վրա մշակվող բանջարեղենից կամ ծառերից՝ որպես օժանդակություն տնային տնտեսություններին կամ որպես զբաղմունք:
- 135) Այնուամենայնիվ, կենսամակարդակը վերականգնելու նպատակով ԱԵԱ-ներին օգնելու համար, զգալի ազդեցության ենթակա 56 ՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը, ՀՕՏԾ-ի համաձայն կստանան նպաստ՝ ի լրումն ծառերի/մշակաբույսերի փոխհատուցման: Ի լրումն, ԵՔ-ը որոշեց ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործողներին տրամադրել լրացուցիչ նպաստ՝ հողի շուկայական արժեքի 25%-ի չափով՝ նրանց կենսամակարդակը վերականգնելու նպատակով:
- 136) Ստորև բերված աղյուսակն ամփոփում է սույն ճանապարհահատվածի ազդեցությունը, իրավասությունները և ԱԵԱ-ներին հասանելիք լրացուցիչ աջակցությունը:

Աղյուսակ 7-1 Զգալի ազդեցության ենթակա ԱԵՏՏ/ԱԵԱ-ներ

Ազդեցության աստիճանը	Ընդամենը	
	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ
	No	No
(ա) ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10% -ը	56	263
Ընդամենը	56	263

Աղյուսակ 7-2 Փոխհատուցում և օժանդակություն եկամտուր կորցնող ազդեցության ենթակա անձանց համար

ԱԵՏՏ-ների թիվը	Կորստի նկարագրությունը	Փոխհատուցման մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը
56	Գյուղատնտեսական եկամտի կորուստ (ներառյալ իրենց սպառման համար)	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ծառերի դիմաց իրենց փոխարինման արժեքով՝ ազդեցության ենթակա ակտիվների հիման վրա	Վերականգնման նպատակով ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% -ի չափով
		Փոխհատուցում հողի վրա իրականացված բոլոր բարելավումների և ակտիվների համար	Օժանդակություն զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններին մրգատու ծառերի կորստի դիմաց՝ 1 տարվա բերքի արժեքի չափով

7.3 Վերաբնակեցման ռազմավարությունը

- 137) Համաձայն ՀՕՏԻ-ի՝ մասնակի կամ ամբողջական ազդեցության ենթարկվող բոլոր շինությունները կփոխհատուցվեն ամբողջությամբ: Այնուամենայնիվ, եթե շինությունը ենթարկվում է մասնակի ազդեցության և ԱԵՏՏ-ն ցանկանում է մնալ մնացած հողակտորի վրա և վերանորոգել շինությունը՝ վերաբնակեցումից խուսափելու համար, ապա դա ԱԵԱ-ի ընտրությունն է: Ծրագրի համար ընդունված վերաբնակեցման ռազմավարությունը հիմնված է փոխարինման արժեքով փոխհատուցման (շինանյութերի շուկայական արժեքը, աշխատուժի, նյութերի տեղափոխության և առնչվող այլ ծախսերը) և ԱԵՏՏ-ների ինքնավերաբնակեցման վրա: ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով հողի վրա ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով շինությունների առկայության դեպքում, սեփականատերերը կստանան փոխհատուցում՝ փոխարինման արժեքի չափով գումարած 15%: ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով հողի վրա անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինությունների առկայության դեպքում, ԱԵԱ-ն կստանա փոխհատուցում՝ փոխարինման արժեքի չափով: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինությունների առկայության դեպքում, ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում՝ փոխարինման արժեքից հանած օրինականացման գործընթացին առնչվող ծախսերը, սակայն ոչ ավել, քան գնահատված ողջ արժեքի 20%-ի չափով:
- 138) Սույն ՀՕՏԻ-ի շրջանակում կլինի բնակավայրից վերաբնակեցման՝ 53 և ձեռնարկատիրական գործունեության վայրի տեղափոխման 7 դեպք: Ընդհանուր առմամբ, 58 տնային տնտեսություններ (առանց կրկնահաշվարկի) կենթարկվեն ազդեցության բնակավայրի և/կամ ձեռնարկատիրական գործունեության վայրի տեղափոխության հետևանքով: Երկու ԱԵՏՏ-ներ կկորցնեն և՛ իրենց ձեռնարկատիրական գործունեությունները, և՛ տները:

Աղյուսակ 7-3 Տեղափոխության/վերաբնակեցման ազդեցություն

Տեղափոխության/վերաբնակեցման ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ
	No	No
Ձեռնարկատիրական գործունեության վայրի (մշտական ազդեցության ենթակա) տեղափոխում	7	32
Բնակավայրից վերաբնակեցում	53	266
Ընդամենը	58*	288
* Երկու ԱԵՏՏ-ներ կկրեն և՛ վերաբնակեցման, և՛ ձեռնարկատիրական վայրի տեղափոխման ազդեցություն		

- 139) 16 ԱԵՏ-ներ կվերաբնակեցվեն 11 հողակտորներից, որոնք ունեն ազդեցության ենթակա գույքին առնչվող դեռևս չլուծված խնդիրներ: Այս ԱԵԱ-ները գույքի համար ունեն տեխնիկական անձնագրեր, որը նշանակում է, որ նրանք գույքի միակ օրինական պահանջատերերն են: 1990-ականներին հողերի/շինությունների սեփականաշնորհման ժամանակ ԱԵԱ-ներին տրվել է փաստաթուղթ, որտեղ նշված է գույքը և սեփականատերերի անունները: Ենթադրվում էր, որ այդպիսի փաստաթղթով նրանք կարող էին կատարել սեփականաշնորհում՝ ձեռք բերելով օրինական սեփականության վկայական գույքի համար: Այնուամենայնիվ, սույն ՀՕՏԻ-ի շրջանակներում առկա են 11 հողակտորներ, որոնց համար գործընթացը չի ավարտվել: ԱԵԱ-ների կողմից նշված պահանջները հետևյալն են՝ ա. սեփականատերը/ժառանգության սեփականատերը մահացել է և տնային տնտեսությունը պետք է ավարտին հասցնի ժառանգության գրանցման գործընթացը, բ. սեփականատերերից ոմանք ապրում են Հայաստանից դուրս և չունեն անձնագիր, որն անհրաժեշտ է ուղարկել նոտարական վավերացում ստանալու համար, որով նրանց ազգականները կարող են սկսել օրինականացման գործընթացը, բ. կադաստրային տվյալներում առկա են որոշ սխալներ, որը

խնդիրներ է առաջացնում գույքի գրանցման համար: Բոլոր 11 դեպքերն էլ ներկայացվել են ՕԻԳ-ին և կլուծվեն ՀՕՏՕ 3-ի իրականացման գործընթացից առաջ կամ ընթացքում:

140) Քանի դեռ այս խնդիրները լուծված չեն, հնարավոր չէ որոշել հողի ճշգրիտ տարածքն՝ ըստ սեփականության կարգավիճակի (ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված և չգրանցված իրավունքով), քանի որ ԱԵԱ-ները սովորաբար օգտագործում են ավել հող, քան նրանց հատկացված է պետության կողմից: Բոլոր այս դեպքերը հաշվի են առնվել սույն ՀՕՏՕ-ի համար՝ առավելագույն հնարավոր ազդեցությամբ և փոխհատուցմամբ: Այնուամենայնիվ, օրինականացման գործընթացի ավարտից հետո կորոշվեն հողի՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված և չգրանցված իրավունքով օգտագործվող տարածքները և կթարմացվեն ազդեցությանն ու փոխհատուցմանն առնչվող տվյալները՝ անկախ մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից պատրաստված համապատասխանության հաշվետվությունում:

7.3.1 Բնակավայրից վերաբնակեցում

141) Կան 53 ԱԵՏՏ-ներ (266 ԱԵԱ-ներ), որոնց բնակելի շինությունները/բնակարանները կքանդվեն:

142) Բնակավայրից վերաբնակեցվողների հետ հանրային լուսմների արդյունքում բացահայտվեց, որ ընդամենը 4 ԱԵՏՏ-ներ ունեն մեկ այլ բնակավայր: 2 տնային տնտեսություններ ցանկության դեպքում ի վիճակի կլինեն կառուցել նոր շինություններ իրենց հողակտորների մնացած մասում: Մյուսները հայտնեցին, որ կցանկանային գնել բնակարաններ, եթե իրենց հատկացվող փոխհատուցման գումարը բավարարի: Սա հատկապես վերաբերում է ընդլայնված ընտանիքներին, որտեղ մի քանի սերունդներ բնակվում են մեկ տանիքի տակ: Անշարժ գույքի տեղական շուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ փոխհատուցման գումարը բավարար կլինի մեկ այլ սեփական գույք գնելու համար: Մասնավորապես՝

ա. բնակարանների դեպքում փոխարինման արժեքը հաշվարկվում է համեմատական գնահատման մեթոդաբանության հիման վրա. գինը գոյացել է նմանատիպ բնակարանների վերջին վաճառքների համեմատության հիման վրա (մանրամասները բերված են կից ներկայացված գնահատման մեթոդաբանության մեջ): Ազդեցության ենթակա բազմահարկ շինությունը Խորհրդային Ժամանակներում կառուցված տիպային շենք է, և տարածքում առկա են նմանատիպ այլ շենքեր: Անշարժ գույքի շուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ Շենգավիթ վարչական շրջանում (Երևան) բնակարանի մեկ քառակուսու միջին արժեքը 255.100 ՀՀ դրամ է (ՀՀ անշարժ գույքի շուկայի մեկ շուկայի 2013թ. սեպտեմբերին, http://www.cadastre.am/storage/files/pages/pg_8270862441_Hodvac_09.2013.pdf, էջ 2) Մանրամասն ներկայացված է Աղյուսակ 7.4-ում: Միևնույն ժամանակ ազդեցության ենթակա բնակարանների մեկ մետր քառակուսին գնահատվել է 267,500.00 ՀՀ դրամ: ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում փոխարինման արժեքի չափով գումարած 15%, որը կերաշխավորի, որ նրանք կկարողանան գնել նույնատիպ նոր, որոշ դեպքերում նույնիսկ ավելի լավ բնակարան միևնույն տարածքում:

Աղյուսակ 7-4 Գնահատված բնակարանների մեկ քառ. մետրի միջին արժեքի համեմատությունը և ԱԳԿՊԿ-ի հետազոտությունը 2013թ. սեպտեմբերի համար

ԱԳԿՊ -ի հետազոտությունը (միջին)	Գնահատված փոխարինման արժեքը (միջին)	Գնահատված արժեքի 15% -ը	Փոխհատուցում (միջին)
---------------------------------	-------------------------------------	-------------------------	----------------------

ԱԳԿՊ -ի հետազոտությունը (միջին)	Գնահատված փոխարինման արժեքը (միջին)	Գնահատված արժեքի 15% -ը	Փոխհատուցում (միջին)
ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ + 15 %
255,100	267,500	40,125	307,625

ա. Բնակելի տների դեպքում փոխարինման արժեքը հաշվարկվել է փոխարինման արժեքի գնահատման մեթոդաբանության հիման վրա, որտեղ արժեքը հաշվարկվել է հաշվի առնելով բոլոր նյութերի և աշխատուժի արժեքը, ինչպես նաև շինարարական ընկերության կողմից վճարված բոլոր հարկերը: Ի լրումն, ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում հողի դիմաց՝ շուկայական արժեքին գումարած 15% չափով: Շենգավիթի անշարժ գույքի շուկայի վաճառքի ենթակա տների գների համեմատությունը ցույց է տալիս, որ հողով բնակելի տան մեկ քառ. մ-ի շուկայական միջին արժեքը 255,000 ՀՀ դրամ է (տես՝ ՀՀ անշարժ գույքի շուկան 2013թ. սեպտեմբերին, http://www.cadastre.am/storage/files/pages/pg_8270862441_Hodvac_09_2013.pdf, էջ 4): Մանրամասները ներկայացված են Աղյուսակ 7.5-ում: Ազդեցության ենթակա հողով բնակելի շինությունների 1 քառ. մետրը միջինում կփոխհատուցվի 278.300 ՀՀ դրամով: Այսպիսի մեծ տարբերությունը պայմանավորված է կիրառվող մեթոդաբանությամբ, որը կառույցների համար ամորտիզացիոն մասհանումներ չի կիրառում: Արդյունքում, ԱԵԱ-ներն իրենց կորցրած հողի դիմաց ստանալով փոխհատուցում շուկայական արժեքին գումարած 15% գումարի չափով, և շինությունների համար՝ փոխարինման արժեքին գումարած 15% գումարի չափով, ի վիճակի կլինեն գնել նոր հող՝ նույնիսկ ավելի մեծ, կամ ի վիճակի կլինեն կառուցել նոր տուն՝ գնած հողի վրա: Այս հատվածում չկա որևէ ԱԵՏՏ, որն օգտագործում է միայն ՀՀ օրենսդրության պահանջների չափահասմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով՝ հող՝ տան համար, սակայն 10 հողակտորներ՝ 15 ԱԵՏՏ-ներով, այժմ գտնվում են օրինականացման գործընթացում: Ազդեցության վերաբերյալ գլխում նշված թվով 11 ՀՀ օրենսդրության պահանջների չափահասմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորներ գտնվում են սեփականության իրավունքով օգտագործվող հիմնական հողակտորներին կից:

Աղյուսակ 7-5 Գնահատված բնակելի տների/հողի մեկ քառ. մետրի միջին արժեքի համեմատությունը և ԱԳԿՊԿ-ի հետազոտությունը 2013թ. սեպտեմբերի համար

ԱԳԿՊԿ-ի հետազոտությունը (միջին)	Գնահատված փոխարինման արժեքը/շինություն (միջին)	Գնահատված շուկայական արժեք /հող (միջին)	Գնահատված արժեքի 15% -ը	Փոխհատուցում (միջին)
ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ	ՀՀ դրամ/քառ.մ + 15 %
255,000*	220,000**	22,000.00	36,300.00	278,300***
* ներառյալ հողի արժեքը. 250 քառ. մ շինության համար նախատեսվել է 400 քառ. մ հող				
** միայն շինության արժեքը				
*** ներառում է միայն շինության տակ գտնվող հողի արժեքը				

143) Ի լրումն լիարժեք փոխարինման արժեք գումարած 15% գումարի՝ ԵԶ-ն կապ կհաստատի ԱԵԱ-ների և անշարժ գույքի գործակալների/գործակալությունների միջև՝ բնակարանների կամ հողերի/տների հնարավոր գնման նպատակով: ԱԵԱ-ները կստանան համապատասխան նպաստներ՝ վերաբնակեցման նպատակով, վերականգնման նպատակով: ՀՕՏՕ-ի իրականացումը սկսելուն պես ԱԵԱ-ներին կտրվի անշարժ գույքի գործակալությունների և գույքի տեղափոխության ծառայություններ տրամադրող գործակալությունների ցանկ՝ տնային

տնտեսությունների իրերի տեղափոխման նպատակով: Մանրամասները ցույց են տրված ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 7-6 Փոխհատուցում և օժանդակություն բնակավայրերից վերաբնակեցվողների համար

ԱԵՏՏ-ների թիվը	Կորստի Նկարագրությունը	Վերաբնակեցումը	Փոխհատուցման մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը	Վերաբնակեցման ժամանակը
58	Բնակելի /տուն	Ինքնավերաբնակեցում	Փոխհատուցում ազդեցության ենթակա ողջ գույքի դիմաց իրենց փոխարինման արժեքով: Կառույցների համար՝ փոխարինման արժեք +15%	1. Վերաբնակեցման նպատակով տրանսպորտային ծախսերի և կենսապահովման ծախսերը հոգալու համար՝ մեկ ամսվա նվազագույն աշխատավարձի չափով	Փոխհատուցման գումարը ստանալուց հետո՝ 45 օրվա ընթացքում
				2. Վերականգնման նպատակով օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% - ի չափով	
				3. Օժանդակություն զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններին վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով	
				4. Տեղական անշարժ գույքի գործակալությունների հետ կապի հաստատում՝ տեղեկատվություն ստանալու և բնակարանների գնման նպատակով	
				5. Տեղափոխության ծառայություններ տրամադրող գործակալությունների հետ կապի հաստատում՝ գույքի տեղափոխության համար	
				6. Օժանդակություն զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններին մրգատու ծառերի կորստի դիմաց՝ 1 տարվա բերքի արժեքի չափով	

7.3.2 Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները

- 144) Ընդհանուր առմամբ, թվով 7 ձեռնարկատիրական գործունեություններ Ծրագրի արդյունքում կենթարկվեն ազդեցության: Ավտոտեխսպասարկման երեք կայաններ, մեկ բենզալցակայան, մեկ մթերային խանութ, մեկ սրճարան և մեկ մետաղական արհեստանոց կենթարկվեն մշտական ազդեցության: Ազդեցության ենթակա բոլոր ձեռնարկատիրական գործունեությունների վայրը կտեղափոխվի ձեռնարկատիրական գործունեության հիմնական շենքերի կորստի հետևանքով: Չորս ձեռնարկատիրական գործունեություններ տեղակայված են ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող առևտրային հողերի վրա և երեքը՝ սեփականության իրավունքով տնօրինվող կամ վարձակալված հողերի վրա:
- 145) Ձեռնարկատիրական գործունեությունների բոլոր սեփականատերերը՝ անկախ իրենց իրավական կարգավիճակից, կստանան աջակցություն՝ ազդեցության ենթարկված իրենց ձեռնարկատիրական գործունեությունները վերականգնելու համար: Մոտեցումը ենթադրում է ԱԵՏՏ-ների լիարժեք փոխհատուցում և ինքնավերաբնակեցում: Ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերերը, որոնք կկրեն մշտական ազդեցություն, կստանան

դրամական փոխհատուցում մեկ տարվա զուտ եկամտի չափով՝ ի լրումն մնացած բոլոր ազդեցության ենթակա գույքի փոխհատուցման: Ի լրումն ազդեցության ենթակա գույքի փոխհատուցման և բոլոր նպաստների, որոնք կօգնեն վերականգնել կորուստները՝ այս ԱԵԱ-ները կստանան աջակցություն իրենց նոր ձեռնարկատիրական գործունեություններն արագ գրանցելու, ինչպես նաև տարածքում գույքի տեղափոխության ծառայություններ տրամադրող և անշարժ գույքի գործակալությունների, անհրաժեշտության դեպքում նաև ձեռնարկատիրական գործունեության կառավարման ուսուցման կենտրոնների հետ կապ հաստատելու համար:

7.3.3 Զբաղվածության կորուստ

- 146) Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցմամբ պայմանավորված 5 աշխատողներ մշտապես կկորցնեն իրենց աշխատանքը: Նրանցից չորսն աշխատում են բենգալցկայանում և մեկը՝ մետաղական արհեստանոցում: Նրանք կփոխհատուցվեն 6 ամսվա իրենց միջին ամսական աշխատավարձի չափով՝ գործունեության դադարեցված ամիսների համար:

Աղյուսակ 7-7 Փոխհատուցում և օժանդակություն ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության համար

ԱԵՏՏ-ների թիվը	Կորստի նկարագրությունը	Փոխհատուցման Մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը	Լրացուցիչ օժանդակություն	Վերաբնակեցման ժամանակը
Մշտական ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները					
6-ը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի առկայությամբ	Ձեռնարկատիրական գործունեության կորուստը՝ շենքը քանդելու հետևանքով	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ակտիվների դիմաց իրենց փոխարինման արժեքով	<p>Փոխհատուցում 1 տարվա զուտ եկամտի չափով</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության գրանցման ծախսեր</p> <p>Վերաբնակեցման նպաստ տրանսպորտային ծախսերը հոգալու համար</p>	<p>1. Ձեռնարկատիրական գործունեության գրանցման արագ ճանապարհ</p> <p>2. Տեղափոխության ծառայություններ տրամադրող գործակալությունների հետ կապի հաստատում՝ ազդեցության ենթակա գույքի տեղափոխության համար</p> <p>3. Տեղական անշարժ գույքի գործակալությունների հետ կապի հաստատում՝ տարածքում ձեռնարկատիրական գործունեության համար նոր տեղ գնելու/վարձակալելու նպատակով</p> <p>4. Ձեռնարկատիրական գործունեության կառավարման ուսուցողական/վերապատրաստման կենտրոնների հետ կապի հաստատում</p>	Դրամաձևի վերաբերյալ ստորագրված հետո 6 շաբաթվա ընթացքում
1 -ը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի բացակայությամբ	Ձեռնարկատիրական գործունեության կորուստը՝ շենքը քանդելու հետևանքով	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ակտիվների դիմաց իրենց փոխարինման արժեքով	<p>Օժանդակություն եկամտի կորստի դիմաց՝ 12 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով</p> <p>Վերաբնակեցման նպաստ տրանսպորտային ծախսերը հոգալու համար</p> <p>Վերականգնման նպաստ՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% -ի չափով</p>		

8. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ

8.1 Ընդհանուր տեղեկություններ

- 147) Սույն գլուխը նկարագրում է ՀՕՏ-ի միավոր դրույքաչափի, արժեքի սահմանման համար ընդունված մեթոդաբանությունը և ԱԵԱ-ներին վճարվելիք փոխհատուցումը՝ Տ1 ՀՕՏՕ 3-ի տարաբնակեցման արդյունքում ազդեցության դիմաց: Սույն գլխում նկարագրված տարբեր կատեգորիաների ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքը սահմանված է ՀՕՏՕ-ով: Փոխհատուցման դրույքաչափերը սահմանվել են արտոնագրված անկախ գնահատողի կողմից՝ թափանցիկ մեթոդաբանության կիրառմամբ, որն ընդունելի է ԱԶԲ-ի, ԾԻԳ/ԵՔ-ի և ՀՀ կառավարության կողմից (մանրամասների համար տես Հավելված 2): ՀՕՏՕ 3-ի բյուջեն ամփոփված է սույն գլխի վերջում:

8.2 Ֆինանսավորման աղբյուրները և բաշխումը

- 148) ՀՕՏՕ 3-ի մշակման և իրականացման ծախսերը, ներառյալ՝ փոխհատուցումն ու վարչական ծախսերը, կֆինանսավորվեն հետևյալ աղբյուրներից.

ա. Հողերի փոխհատուցման և հողի օտարման այլ ծախսեր, ներառյալ՝ հարկերը, տուրքերը, վճարները, գործառնական ծախսերը, ինչպես նաև ԵՔ-ին պատկանող հողերի ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործման դիմաց վերականգնման նպաստը կֆինանսավորվեն Երևանի համայնքային բյուջեով՝ տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներից:

բ. Հարկերը, վճարները և գործառնական ծախսերը կապված հողից բացի այլ կորուստների հետ, ներառյալ՝ նպաստների հետ առնչվող գործառնական ծախսերը, կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեով՝ տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսված ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից:

գ. Մնացած այլ գույքի փոխհատուցումը, ինչպես նաև նպաստները, կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեով՝ տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսված վարկային միջոցներից:

- 149) ԾԻԳ-ը պետք է ձեռնարկի միջոցներ ՀՕՏՕ 3-ի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները համապատասխան ֆինանսավորման աղբյուրներից պահանջելու և ժամանակին ԱԵԱ-ներին հատկացնելու համար՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերում յուրաքանչյուր ԱԵԱ-ի անունով բացված անհատական բանկային հաշվին:

8.3 Օտարվող հողի դիմաց փոխհատուցումը

8.3.1 Գնահատման մեթոդաբանությունը

150) Համաձայն ՀՕՏԸ-ի՝ հողը փաստացի տիրապետող, վարձակալող և օգտագործող ԱԵԱ-ները, որոնց օգտագործման իրավունքը տվյալ անշարժ գույքի նկատմամբ ենթակա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցման՝ կատանան փոխհատուցում ազդեցության ենթակա հողի դիմաց: ԵՔ-ն որոշում է կայացրել ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողերի՝ օգտագործողներին տրամադրել կենսապահովման միջոցների վերականգնման նպաստ՝ ազդեցության ենթակա հողի դիմաց: Փոխհատուցման մանրամասները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 8-1 Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի դիմաց փոխհատուցումը/վերականգնման նպաստը

Սեփականատերը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցման ենթակա հողօգտագործողը	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով
Փոխարինման արժեք+15%	Փոխարինման արժեք +15% (օրինականացումից հետո)	Փոխարինման արժեքի 25%-ը
Վարձակալության մնացած տարիների վարձակալները		
Մինչև 1 տարի - (փոխարինման արժեք+15%) * 0.05		
Մինչև 15 տարի - (փոխարինման արժեք +15%) * 0.14		
Մինչև 25 տարի - (փոխարինման արժեք +15%) * 0.20		
25 տարի - (փոխարինման արժեք +15%) * 0.25		

151) Փոխհատուցման և վերականգնման նպաստի հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողի շուկայական արժեքը: Հողի շուկայական արժեքը գնահատվում է գնահատման համեմատական մեթոդի կիրառմամբ («Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 11): Համեմատական մեթոդը հիմնված է նույնանման հողամասերի վաճառքի շուկայական արժեքի տվյալների հուսալի համեմատության վրա (նվազագույնը վաճառքի երեք օրինակ): Այս մեթոդի հիման վրա սահմանվում է վերջերս վաճառված հողերի ճշգրտված միջին գինը (նույն տարածքում և միևնույն/նմանատիպ կիրառության նպատակով/հատկանիշներով): Յուրաքանչյուր հողակտորի գինը սահմանվում է առանձին, քանի որ հողի գնի տարբերությունները պայմանավորված են շատ գործոններով՝ նույնիսկ ճշգրտված հողակտորների համար: (Գնահատման մեթոդաբանության մանրամասները ներկայացված են Հավելված 2-ում):

8.3.2 Հողի սեփականատերերի փոխհատուցումը

152) Անշարժ գույքի սեփականատերերին վճարվելիք փոխհատուցումը հաշվարկվել էր փոխարինման արժեքին գումարած 15% օժանդակություն՝ համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի: Հողի դիմաց սեփականատերերի փոխհատուցման ընդհանուր արժեքը կազմում է **435,671,652.25** ՀՀ դրամ:

Աղյուսակ 8-2 Փոխհատուցում մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի համար

Հողի կատեգորիան	Հողակտոբ	Ազդեցության ենթակա տարածքը	Միավորի միջին գինը	Հողի ընդհանուր արժեքը	Հողի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
	No	մ ²	ՀՀ դրամ/	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
(Ա) Օրինական գույքը					
Բնակելի	26	10,626.80	21,681.56	230,405,612.00	264,966,453.80
Առևտրային	2	267.32	30,526.90	8,160,452.00	9,384,519.80
Աղյունաբերական	2	2,616.90	12,575.35	32,908,434.00	37,844,699.10
Միջանկյալ ընդհանուր (Ա)	30	13,511.02	-	271,474,498.00	312,195,672.70
(Բ) Օրինականացման ընթացքում գտնվող գույքը					
Բնակելի	11	4,577.72	23,455.00	107,370,417.00	123,475,979.55
Ընդամենը (Ա+Բ)	41	18.088.74	-	378,844,915.00	435,671,652.25

8.3.3 Փոխհատուցումը հողի վարձակալներին

153) Վարձակալների փոխհատուցումը հաշվարկվում է ազդեցության ենթակա հողամասի շուկայական արժեքի հիման վրա և ավելացվում է 15 %-ով՝ հետևյալ համամասնությամբ և վարձակալության մնացած տարիների հիման վրա. 1) < 1 տարի 5%, 2) < 15 տարի 14%, 3) < 25 տարի 20%, 4) > 25 տարի 25%: 1 վարձակալին վճարվելիք ընդհանուր փոխհատուցումը **1,535,770.38** ՀՀ դրամ է:

Աղյուսակ 8-3 Փոխհատուցում հողի վարձակալներին

Հողի կատեգորիան	Հողամասը	Ազդեց. տարածքը	Միավորի գինը	Հողի շուկայական արժեքը	Շուկայական արժեք +15%	Վարձակալության մնացած տարիներ	Գիրատվող գործակիցը	Փոխհատուցման ընդհանուր գումարը
	No.	մ ²	ՀՀ դրամ/	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	No.	%	ՀՀ դրամ
Աղյունաբերական	1	190.10	28,100.00	5,341,810	6,143,081.5	25	25	1,535,770.38
Ընդամենը	1	190.10	-	5,341,810	6,143,081.5	-	-	1,535,770.38

8.3.4 Վերականգնման նպաստ՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի համար

154) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց տրամադրվող վերականգնման նպաստը կկազմի հողի շուկայական արժեքի 25%-ը: Ընդհանուր առմամբ, Երևանի քաղաքապետարանի և Արգավանդ համայնքի հողերի ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողներին կվճարվի **43,298,015.00** ՀՀ դրամ 8,301.54 մ² հողի դիմաց՝ որպես կենսապահովման միջոցների կորստի վերականգնման նպաստ:

Աղյուսակ 8-4 Վերականգնման նպատակով ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի համար

Հողի տեսակը	Հողամասը	Ազդեցության ենթակա տարածքը	Միավորի միջին գինը	Հողի ընդհանուր արժեքը	Ընդհանուր վերականգնման նպատակով (ընդհանուր արժեքի 25%-ը)
	No	մ ²	ՀՀ դրամ/ մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Բնակելի	14	1,274.01	25,712.80	32,758,370.00	8,189,592.50
Այգի	17	4,935.67	16,569.74	81,782,752.00	20,445,688.00
Առևտրային	8	1,689.56	29,908.83	50,532,768.00	12,633,192.00
Ոչ բնակելի	3	73.25	28,621.91	2,096,555.00	524,138.75
Արդյունաբերական	1	329.05	18,300.00	6,021,615.00	1,505,403.75
Ընդամենը	43	8,301.54	-	173,192,060.00	43,298,015.00

8.4 Փոխհատուցում շենքերի, շինությունների և բարելավումների համար

8.4.1 Գնահատման մեթոդաբանությունը

155) Օտարվող շինությունների դիմաց փոխհատուցումը հաշվարկվում է և՛ անշարժ գույքի սեփականատերերի, և՛ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինությունների օգտագործողների համար: Յուրաքանչյուր խմբի համար ՀՕՏԵ-ն սահմանում է հատուկ մոտեցում փոխհատուցումը հաշվարկելու համար: Ընդհանուր մոտեցումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 8-5 Փոխհատուցում բնակելի և ոչ բնակելի շինությունների համար

ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ և չպահպանմամբ տիրապետվող և օգտագործվող բնակելի շինություններ	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ տնօրինվող ոչ բնակելի շինություններ	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ տիրապետվող և օգտագործվող ոչ բնակելի շինություններ գրանցված իրավունքով օգտագործվող հողամասի վրա	ՀՀ օրենսդրության Պահանջների չպահպանմամբ տիրապետվող և օգտագործվող ոչ բնակելի շինություններ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ տիրապետվող և օգտագործվող հողամասի վրա
Փոխարինման արժեք +15%	Փոխարինման արժեք +15%	Փոխարինման արժեք	Փոխարինման արժեք՝ հանած 20%՝ օրինականացման ծախսերի համար

156) Շենքերի և շինությունների փոխարինման արժեքները սահմանվում են՝ նույն նպատակին ծառայելու և նույն նյութերի օգտագործմամբ նմանատիպ նոր շենքի/շինության կառուցման ծախսերի կամ գնահատման օրվա դրությամբ ժամանակակից պահանջներին բավարարող փոխարինողների՝ շուկայում տիրող գների հաշվարկի հիման վրա: (Գնահատման մեթոդաբանության մանրամասները ներկայացված են Հավելված 2-ում):

8.4.2 Բնակելի շինություններ

157) Ընդհանուր առմամբ, **6903.03** մ² տարածքով ազդեցության ենթակա շենքերի և շինությունների համար սեփականատերերին և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողներին կվճարվի **1,352,944,880.32** ՀՀ դրամ՝ հողի օտարման դիմաց: Մեկ ԱԵԱ կկորցնի մեքենայի

մուտքը դեպի իր բնակության վայր: Նրան կվճարվի 450.000 ՀՀ դրամ՝ հողակտորի մյուս կողմում նոր դարպաս տեղադրելու համար:

Աղյուսակ 8-6 Փոխհատուցում բնակելի շինությունների համար

Անվանումը	Նյութի տեսակը	No	Ընդամենը	Միավորի միջին արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
			մ ²	ՀՀ դրամ/ մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Ա. Բնակարաններ						
Բնակարան	Քարե	8	423.88	267,686.23	113,466,838.09	130,486,863.80
Նկուղ	Քարե	2	9.31	175,592.48	1,634,766.00	1,823,626.00
Գետնափոր պահեստ	Հողից	1	5.94	45,600.00	270,864.00	239,976.00
Անավարտ շինություն	Քարե	1	39.83	50,600.00	2,015,398.00	1,808,282.00
Սանհանգույց	Բլոկով շարվածք	1	2.34	74,500.00	174,330.00	200,479.50
Միջանկյալ ընդհանուր (Ա)		13	481.3	-	117,562,195.00	134,559,227.30
Բ. Տներ						
Բնակելի տուն	Քարե/ բետոնե, մետաղական	39	4143.8	220,127.52	912,164,401.00	1,048,989,061.15
Միջանկյալ ընդհանուր (Բ)		39	4143.8	220,127.52	912,164,401.00	1,048,989,061.15
Գ. Օժանդակ կառույցներ						
Գ1. Օժանդակ կառույցներ ազդեցության ենթակա հիմնական շինությունների հետ						
Անասնագոմ	Քարե	2	49.62	98,600.00	4,892,532.00	5,626,411.80
Նկուղ	Բետոնե	7	76.63	203,373.29	15,584,495.00	17,922,169.25
Ավտոտնակ	Քարե	4	122.86	144,497.95	17,753,018.00	20,415,970.70
Ջերմոց	Ապակ	1	48.32	51,700.00	2,498,144.00	2,872,865.60
Հավաքուն	Քարե	2	44.83	101,481.26	4,549,405.00	5,231,815.75
Գետնափոր պահեստ	Քարե	3	12.48	105,939.18	1,322,121.00	1,520,439.15
Ձեղնահարկ	Մետաղական	2	148.5	17,748.48	2,635,650.00	3,030,997.50
Մանսարդ	Քարե, մետաղական	4	171	71,942.73	12,302,206.24	14,147,537.18
Զգործող	Քարե	2	14.8	251,339.19	3,719,820.00	4,277,793.00
Պատշգամբ	Մետաղական	2	125.3	29,392.34	3,682,860.00	4,235,289.00
Ջրավազան, լողավազան	Քարե, բետոնե	3	13.78	100,913.64	1,390,590.00	1,599,178.50

Անվանումը	Նյութի տեսակը	No	Ընդամենը	Միավորի միջին արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
			մ ²	ՀՀ դրամ/ մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Ծածկ	Մետաղական	35	656.89	16,891.98	11,096,170.00	12,760,595.50
Պահեստ	Մետաղական, քարե	3	27.63	76,039.12	2,100,961.00	2,416,105.15
Ամառային խոհանոց	Քարե	1	18.76	174,300.00	3,269,868.00	3,760,348.20
Օժանդակ կառույց	Քարե, բլոկներից, բետոնե, փայտանյութ	33	382.92	111,445.00	42,674,521.00	49,075,699.15
Սանհանգույց	Քարե, փայտանյութ	5	20.04	110,901.60	2,222,468.00	2,555,838.20
Միջանկյալ ընդհանուր (Գ1)		109	1934.36	1,666,505.76	131,694,829.24	151,449,053.63
(Գ2) ՏՏ-ների օժանդակ կառույցները՝ առանց բնակելի կորուստների						
Ջերմոց	Մետաղական	1	91.29	7,700.00	702,933.00	808,372.95
Զգործող խանութ	Բլոկով շարվածք	1	20.35	329,600.00	6,707,360.00	7,713,464.00
Ջրավազան, լողավազան	Քարե	1	21.4	119,400.00	2,555,160.00	2,938,434.00
Ծածկ	Մետաղական	3	161.86	15,400.00	2,492,644.00	2,866,540.60
Օժանդակ կառույց	Քարե, փայտանյութ	3	48.67	64,689.91	3,148,458.00	3,620,726.70
Միջանկյալ ընդհանուր (Գ2)		9	343.57	-	15,606,555.00	17,947,538.25
Միջանկյալ ընդհանուր (Գ1+Գ2)		118	2,277.93	-	147,301,384.24	169,396,591.88
Ընդամենը (Ա+Բ+Գ)		170	6,903.03	-	177,027,980.24	1,352,944,880.32

Աղյուսակ 8-7 Փոխհատուցում վերանորոգման ծախսերի համար

Անվանումը	№	Միավորի արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
		ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Դարպաս	1	450,000.00	450,000.00
Ընդամենը	1	450,000.00	450,000.00

8.4.3 Ոչ բնակելի շինություններ

- 158) Ընդհանուր առմամբ, 1,027.7մ² տարածքով ազդեցության ենթակա 33 շենքերի և շինությունների համար սեփականատերերին և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողներին կվճարվի **184,124,854** ՀՀ դրամ՝ հողի օտարման դիմաց:

Աղյուսակ 8-8 Փոխհատուցում ոչ բնակելի շինությունների համար

No	Կառույցի/շինության տեսակը	Երկիր	No	Օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցված քառ.մ	Օրենսդրության պահանջների չպահպանմամբ, չգրանցված քառ.մ	Ընդհանուր քառ.մ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
							ՀՀ դրամ/մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Ա. Ոչ ձեռնարկատիրական գործունեության կառույցներ									
1	Ծածկ	Մետաղական	1	-	4	4	15,400	61,600	49,280
3	Օժանդակ պահեստային շինություն	Բլոկով շարվածք	1	-	6.44	6.44	77,300	497,812	464,324
	Պահեստային հոր	Հողից	1	-	6	6	58,600	351,600	320,400
4	Ավտոտեխսպասարկման հոր (մասնավոր օգտագործման համար)	Քարե	1	-	2.7	2.7	45,600	123,120	109,080
5	Ավտոտնակ	Քարե	1	0	24.12	24.12	137,700	3,321,324	3,195,900
Միջանկյալ ընդհանուր (Ա)			5	-	43.26	43.26	-	4,355,456	4,138,984
Բ. Ձեռնարկատիրական գործունեության կառույցներ									
Ձեռնարկատիրական գործունեություն No 1	Չգործող խանութ	Քարե	1	-	43.69	43.69	276,700	12,089,023	11,263,282
	Ծածկ	Մետաղական/Քարե	1	-	25.58	25.58	61,300	1,568,054	1,254,443
	Ծածկ	Մետաղական	1	-	39.67	39.67	15,400	610,918	488,734
	Բենզալցակայան	Քարե	1	37.3	-	37.3	365,100	13,618,230	15,660,964.50
Ձեռնարկատիրական գործունեություն No 2	Առանձին տաղավար սրճարանում	Քարե	1	-	19.41	19.41	183,900	3,569,499	3,202,650
	Ծածկ	Մետաղական	1	-	23.5	23.5	15,400	361,900	289,520

No	Կառույցի/շինության տեսակը	Նյութը	No	Օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցված քառ.մ	Օրենսդրության պահանջների չպահպանմամբ, չգրանցված քառ.մ	Ընդհանուր քառ.մ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
							ՀՀ դրամ/մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Ձեռնարկատիրական գործունեություն No 3	Արհեստանոց	Քարե	1	-	10.68	10.68	132,100	1,410,828	1,365,972
	Սանհանգույց	Քարե	1	-	2.51	2.51	156,600	393,066	382,524
	Շինություն	Փայտանյութ	1	-	6.93	6.93	93,200	645,876	616,770
	Շինություն	Քարե	1	-	35.77	35.77	154,400	5,522,888	5,372,654
	Ծածկ	Մետ	1	-	75.14	75.14	15,400	1,157,156	925,725
	Արհեստանոց	Մետ	1	144.5	-	144.5	157,700	22,787,650	26,205,798
	Արհեստանոց	Քարե	1	37.4	-	37.4	137,700	5,149,980	5,922,477
Ձեռնարկատիրական գործունեություն No 4	Ավտոտեխսպասարկման հոր	Քարե	1	-	4.35	4.35	91,200	396,720	317,376
	Ծածկ	Մետ	1	-	5.8	5.8	15,400	89,320	71,456
	Աստիճաններ	Քարե	1	-	1.68	1.68	109,800	184,464	152,712
Ձեռնարկատիրական գործունեություն No 5	Ավտոմեքենաների վերանորոգման	Քարե	1	132.1	-	132.1	300,800	39,735,680	45,696,032
Ձեռնարկատիրական գործունեություն No 6	Ավտոտնակ/ Ավտոմեքենաների վերանորոգման կետ	Քարե	1	67.2	-	67.2	127,400	8,561,280	9,845,472
	Աստիճաններ	Մետ/ Բետոնե	1	18.9	-	18.9	15,400	291,060	334,719
	Ավտոտեխսպասարկման հոր	Քարե	1	-	6.65	6.65	78,200	520,030	598,034.50
Ձեռնարկատիրական գործունեություն No 7	Մթերային	Քարե	1	-	24.45	24.45	376,300	9,200,535	8,628,405
	Ծածկ	Մետ	1	-	5.34	5.34	15,400	82,236	65,789
	Խանութ	Քարե	1	1.53	-	1.53	376,300	575,739	662,099.85

No	Կառույցի/շինության տեսակը	Նյութը	No	Օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցված քառ.մ	Օրենսդրության պահանջների չպահպանմամբ, չգրանցված քառ.մ	Ընդհանուր քառ.մ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը
							ՀՀ դրամ/մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Զեռնարկատիրական գործունեություն No 8	Զգործող խանութ	Քարե	1	59.2	-	59.2	268,600	15,901,120	18,286,288
	Զգործող հացի փուռ	Քարե	1	103.67	-	103.67	176,900	18,339,223	21,090,106.45
	Պահակակետ	Քարե	1	5.97	-	5.97	79,600	475,212	546,493.80
	Ծածկ	Մետ	1	-	38.62	38.62	12,300	475,026	380,021
	Դեկորատիվ ջրավազան	Քարե	1	-	6.9	6.9	65,100	449,190	359,352
Միջանկյալ ընդհանուր (Բ)			28	608	377	984.44		164,161,903	179,985,869.60
Ընդամենը (Ա+Բ)			33	608	420.26	1,027.70	-	168,517,359	184,124,854

8.4.4 Ցանկապատեր և բարելավումներ

159) ԱԵԱ-ների կողմից կատարված բոլոր բարելավումները, անկախ դրանց կարգավիճակից, ենթակա են փոխհատուցման: Այնպիսի բարելավումները, ինչպիսիք են բետոնե աղյուսներով և ասֆալտապատ տարածքները, կփոխհատուցվեն փոխարինման արժեքով: Ընդհանուր առմամբ, **26,388,090.00** ՀՀ դրամ կվճարվի տարբեր տեսակի բարելավումների համար: Ազդեցության ենթակա ցանկապատերի համար փոխհատուցումը կազմում է **28,278,718.20** ՀՀ դրամ:

Աղյուսակ 8-9 Փոխհատուցում ցանկապատերի համար

Լյուրը	Երկաթուղիներ	Մակերես	Միավորի գինը	Շուկայական արժեքը	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցված գույքի փոխհատուցումը (շուկայական արժեք + 15%)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ չգրանցված գույքի փոխհատուցումը (շուկայական արժեք հասած	Ընդհանուր փոխհատուցումը
					ՀՀ դրամ	ՀՀ դրամ	
Մետաղական	552.64	-	3,300	1,823,712	220,110.00	1,305,850	1,525,960.00
Մետաղական	96.4	-	6,700	645,880	354,430.00	270,144	624,574.00
Տուֆե/քարե Ա	-	448.64	8,000	3,589,120	3,517,252.00	424,512	3,941,764.00
Տուֆե/քարե Բ	-	96.6	9,300	898,380	1,033,137.00	-	1,033,137.00
Տուֆե/քարե Գ	-	104.16	10,000	1,041,600	1,197,840.00	-	1,197,840.00
Տուֆե/քարե Դ	-	197.83	15,400	3,046,582	3,458,408.80	31,416	3,489,824.80
Տուֆե/քարե Ե	-	108.14	21,400	2,314,196	2,661,325.40	-	2,661,325.40
Տուֆե/քարե Զ	-	251.9	33,400	8,413,460	9,675,479.00	-	9,675,479.00
Տուֆե/մետաղական	-	19.52	21,400	417,728	-	334,182	334,182.00
Երկաթ բետոնե սալեր/քարե Ա	-	198.4	16,000	3,174,400	3,650,560.00	-	3,650,560.00
Երկաթ բետոնե սալեր/քարե Բ	-	15.66	8,000	125,280	144,072.00	-	144,072.00
Ընդամենը	649.04	1,440.850	-	25,490,338	25,912,614.20	2,366,104	28,278,718.20

Աղյուսակ 8-10 Փոխհատուցում այլ բարելավումների համար

Տեսակը	Լյուրը	Հողակտորները	Տարածքը	No	Միավորի	Փոխհատուցումը
		No	մ²		ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Տարածք	Ասֆալտ	5	315.36	-	9,000.00	2,838,240.00
Տարածք	Բետոնապատ	40	2,425.16	-	6,500.00	15,763,540.00
Տարածք	Բետոնե սալեր	3	176.99	-	7,809.09	1,382,130.84

Տեսակը	Նյութը	Հողակտորները	Տարածքը	No	Միավորի	Փոխհատուցումը
		No	մ ²		ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Տարածք	Սալ	1	47.96	-	8,000.00	383,680.00
Աղյուսե	Աղյուս	1	-	2	1,500,000.00	3,000,000.00
Դարպաս	Մետաղ	2	13.8	-	50,000.00	690,000.00
Բուխարի	Աղյուս	1	-	1	750,000.00	750,000.00
Թոնիք	Աղյուս	1	-	1	500,000.00	500,000.00
Մանղալ	Աղյուս	2	-	2	500,000.00	1,000,000.00
Դուռ	Մետաղական	1	1.61	-	50,000.00	80,500.00
Ընդամենը		46*	2980.88	6	-	26,388,090.00

* Միննույն հողակտորի վրա կան տարբեր տեսակի մի քանի բարելավումներ

8.5 Մշակաբույսերի և ծառերի փոխհատուցումը

8.5.1 Մշակաբույսեր

160) Մշակաբույսերի դիմաց կվճարվի դրամական փոխհատուցում՝ շուկայական դրույքաչափով՝ տարեկան ակնկալվող համախառն բերքի համար: Միավորի դրույքաչափերը սահմանվել են հիմնական մշակաբույսերի 5 տարվա ժամանակահատվածի բերքի և գների հիման վրա: Մշակաբույսերի ընդհանուր փոխհատուցումը կազմում է **306,134** ՀՀ դրամ:

Աղյուսակ 8-11 Փոխհատուցում մշակաբույսերի համար

Մշակաբույսի տեսակը	Տարեկան բերքատվությունը	Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը	Արժեքը	Գումարը
	կգ/ մ ²	մ ²	կգ	ՀՀ դրամ / մ ²	ՀՀ դրամ
Գետնախնձոր	2.86	5	14.3	429	2145
Ելակ	0.62	160	99.2	371	59360
Լոբի	2.86	22	62.92	957	21054
Լոլիկ	4.42	20	88.4	919	18380
